«ՊԱՀԱՆՋԱՏԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

«ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ

Օր առաջին

Նիստ 1

Մասնակցային մոնիտորինգի ներածություն
Ի՞նչ է քաղաքացիական մասնակցությունը

Խնդիրները՝

Այս նիստի վերջում մասնակիցները

- Ծանոթ կլինեն միմյանց և դասընթացավարի հետ
- Համառոտ պատկերացում կունենան երկօրյա դասընթացի թեմաներից
- Կսահմանեն իրենց ակնկալիքները դասընթացից
- Կսահմանեն դասընթացի ընթացքում խմբի նորմերը

Կկարողանան՝

- Տալ մասնակցության սահմանումը
- Իմանալ մասնակցության կարևորությունը
- Իմանալ մասնակցության սկզբունքները

Ընդհանուր ժամանակը՝ 1 ժամ 30 րոպե

Նիստի նկարագրություն՝

1. Ծանոթացում (30 րոպե)
2. Մասնակցության սահմանումը (10 րոպե)
3. Ինչու՞ է կարևոր մասնակցությունը (10 րոպե)
4. Մասնակցության սկզբունքները (40 րոպե)

Նյութերը՝

- ✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,
- ✓ Բլոկնոտ, գրիչ

Բաժանվող նյութերը՝

- Դասընթացի օրակարգ,
- Մասնակիցներին բաժանվող ձեռնարկ,

Մեթոդները՝

- Մտքերի գրոհ
- Բաց և փակ հարցեր
- Ընդհանուր քննարկումներ
- Տեսական նյութի ներկայացում
- Խմբային վարժություն
- Անհատական վարժություն
- Ամփոփում

1. Ծանոթացում (30 րոպե)

Ընդհանուր քննարկում , խմբային աշխատանք, մտքերի գրոհ (30 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը ողջունում է մասնակիցներին և նրանց բաժանում երկու մասի կտրած նկարներ: Այնուհետև առաջարկում է նրանց, որ յուրաքանչյուրը գտնի իր մոտ եղած նկարի մյուս կեսը վերցրած մասնակցին: Առաջացած զույգի անդամները միմյանց ներկայանում են և իրարից ճշտում անունը, ազգանունը, կազմակերպությունը, զբաղմունքը, կրթությունը, դասընթացների մասնակցության փորձը: Տրվում է 3 րոպե ժամանակ: Այնուհետև մասնակիցները ողջ խմբի համար փոխադարձաբար ներկայացնում են իրենց գործընկերոջը:
Եթե մասնակիցները կենտ թվով են, ապա դասընթացավարը ևս նկարի կես է վերցնում, իսկ եթե զույգ թվով են, ապա ինքն իրեն է ներկայացնում:

Քայլ 2. Դասընթացավարը համառոտ ներկայացնում է դասընթացի նպատակները և խնդիրները

Քայլ 3. Մտքերի գրոհի միջոցով բացահայտում է մասնակիցների ակնկալիքները դասընթացից, տալով հարց, թե ի՞նչ են ակնկալում ստանալ մասնակիցները դասընթացի արդյունքում: Հնչած բոլոր տեսակետները գրի է առնվում ֆլիպչարտ թղթի վրա:

Քայլ 4. Մտքերի գրոհի միջոցով, մասնակիցներին հարցնելով, դասընթացավարը թղթի վրա գրանցում է Խմբի նորմերը և փակցնում բոլորի համար տեսանելի տեղում:

2. Մասնակցության սահմանումը (10 րոպե)

Մտքերի գրոհ, ամփոփում (10 րոպե)

Քայլ 1. Մասնակիցների հետ սահմանել **«Մասնակցություն»** տերմինը դասընթացի համատեքստում: Այդ նպատակով անցկացնելով մտքերի գրոհ և պատասխանները գրել ֆլիպչարտ թղթի վրա:
Ենթադրվող պատասխաններ՝

- Քաղաքացիների մասնակցությունն է իրականացվող աշխատանքներին
- Քաղաքացիների մասնակցությունն է որոշումների կայացմանը
- Քաղաքացիների վերահսկողությունն է լիազորությունների իրականացման նկատմամբ
-
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ներկայացնում է «Մասնակցության» սահմանումները՝

«Քաղաքացիների մասնակցությունը» այն բոլոր միջոցառումների եւ նախաձեռնությունների ընդհանրությունն է, որոնք հնարավոր են դարձնում քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացմանը:

Մեկ այլ սահմանում՝

«Քաղաքացիների մասնակցությունը» քաղաքացիների մասնակցությունն է քաղաքական որոշումների կայացմանը:

Կամ՝

Քաղաքացիները իրենք են զարգացման գործընթացների տերը և պետք է ակտիվորեն մասնակցեն ծրագրային ցիկլի բոլոր փուլերում:

3. Ինչու՞ է կարևոր մասնակցությունը (10 րոպե)

Մտքերի գրոհ, ամփոփում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Մասնակիցների հետ անցկացնել մտքերի գրոհ թե ինչու է կարևոր մասնակցությունը, պատասխանները գրել ֆլիպչարտ թղթի վրա:

<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Որպեսզի քաղաքացիները տեղյակ լինեն իրականացվող ծրագրերին
- Որպեսզի նվազեն կոռուպցիոն ռիսկերը
- Որպեսզի քաղաքացիները վերահսկեն հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը
- Քաղաքացիները կարողանան հսկել ֆինանսական միջոցների ծախսերը
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում թե ինչու է կարևոր մասնակցությունը, շեշտելով որ իրենք՝ քաղաքացիները ծառայություն ստացող են, որի համար նախապես վճարել են հարկերի և տուրքերի տեսքով, իսկ պատկան մարմինները ծառայություն մատուցող են և օրենքներով նախատեսված է նրանց հաշվետվողականությունը քաղաքացիների (ծառայություն ստացողների) առջև:

4. Մասնակցության սկզբունքները (40 րոպե)

Ստորև նշված մասնակցության 5 սկզբունքները ներկայացվում են հետևյալ եղանակներով՝

- **Բազմազանություն**
- **Հավասարություն**
- **Թափանցիկություն**
- **Հաշվետու լինել**

- **Համատեղ առաջնորդություն**

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը մասնակիցների հետ հարց ու պատասխանի միջոցով հստակեցնում է **«սկզբունքի»** սահմանումը, խնդրելով ներկայացնել մի քանի սկզբունքներ և փորձել տալ սահմանումը: Դրանից հետո ամփոփում է հնչած տեսակետները և տալիս է սկզբունքի սահմանումը որպես գործողության նկատմամբ մոտեցում, որի ողջ ընթացքում պահվում են նույն արժեքները:

Բազմազանությունը որպես մասնակցության սկզբունք

Մտքերի գրոհ, ամփոփում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե իրենք մասնակցության համատեքստում ի՞նչ են հասկանում բազմազանություն ասելով: Տեսակետները գրի է առնում ֆլիպչարտ թղթի վրա:

<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Հասարակության տարբեր սոցիալական խավերի մասնակցությունն է գործընթացին
- Կանանց և տղամարդկանց ներգրավումն է
- Տարբեր թաղամասերի բնակիչների մասնակցությունն է
- Տարբեր տեղերում աշխատողների ներգրավումն է
-
-

<u>Քայլ 2.</u> Մտքերի գրոհի արդյունքները դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում, որ **բազմազանությունը** հասարակության տարբեր սոցիալական խավերի, տարբեր թաղամասերի բնակիչների, տարբեր տեղերում աշխատողների, կանանց և տղամարդկանց հնարավոր հավասարապես ընդգրկումն է գործընթացին, քանի որ վերը նշված յուրաքանչյուր խումբ ունի իր առանձնահատուկ կարիքները և ինքը ամենալավն է պատկերացնում այդ կարիքները:

Հավասարությունը որպես մասնակցության սկզբունք

Մտքերի գրոհ, ամփոփում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե իրենք մասնակցության համատեքստում ի՞նչ են հասկանում հավասարություն ասելով: Տեսակետները գրի է առնում ֆլիպչարտ թղթի վրա:

<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Հասարակության տարբեր սոցիալական խավերի հավասար մասնակցությունն է գործընթացին
- Յուրաքանչյուր ոք հավասար ձայնի իրավունք ունի որոշումների կայացման ժամանակ
- Տարբեր թաղամասերի բնակիչների հավասար մասնակցությունն է
- Կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն է
-

<u>Քայլ 2.</u> Մտքերի գրոհի արդյունքները դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում, որ **հավասարությունը** հասարակության տարբեր սոցիալական խավերի, տարբեր թաղամասերի բնակիչների, տարբեր տեղերում աշխատողների, կանանց և տղամարդկանց հնարավոր հավասարապես ընդգրկումն է գործընթացին:

Թափանցիկությունը որպես մասնակցության սկզբունք

Մտքերի գրոհ, ամփոփում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե իրենք մասնակցության համատեքստում ի՞նչ են հասկանում թափանցիկություն ասելով: Տեսակետները գրի է առնում ֆլիպչարտ թղթի վրա:
<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Գործընթացների իրականացումն է թափանցիկ եղանակով
- Տեղեկատվության հասանելիությունն է բոլորի համար
- Բնակչության իրազեկումն է ընդունված որոշումների և կատարած աշխատանքների վերաբերյալ
- Օրենքներով սահմանված հաշվետվությունների ներկայացումն է ծառայություն ստացողներին
-

<u>Քայլ 2.</u> Մտքերի գրոհի արդյունքները դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում, որ **թափանցիկությունը** որոշումների կայացման և գործընթացների իրականացման ժամանակ հավաստի տեղեկատվության ներկայացումն է ոչ պաշտոնական և օրենքներով սահմանված պաշտոնական եղանակներով:

Հաշվետու լինելը որպես մասնակցության սկզբունք

Մտքերի գրոհ, ամփոփում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարցնում է մասնակիցներին, թե իրենք մասնակցության համատեքստում ի՞նչ են հասկանում հաշվետու լինել ասելով: Տեսակետները գրի է առնում ֆլիպչարտ թղթի վրա:

Ենթադրվող պատասխաններ՝

- Երբ ծառայություն մատուցողները պարբերաբար ներկայացնում են հաշվետվություններ իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ
- Կազմակերպում են օրենքով նախատեսված հանրային լսումներ բյուջեների նախագծերի կազմման և կատարողականի ներկայացման ժամանակ
-

Քայլ 2. Մտքերի գրոհի արդյունքները դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում, որ **Հաշվետու լինելու** սկզբունքը ապահովում է ինչպես պատասխանատու մոտեցման, այնպես էլ աշխատանքների արդյունավետ կատարման, ընթացքում անհրաժեշտ շտկումների իրականացման և վերջնական արդյունքներին հասնելու համար:

Համատեղ առաջնորդությունը որպես մասնակցության սկզբունք

Խմբային աշխատանք, ամփոփում (20 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին շրջանաձև կանգնել, իսկ մի մասնակցի, ով կամավոր կցանկանա, դուրս գալ սենյակից: Այնուհետև մասնակիցներին առաջարկում է շրջանաձև կանգնած դիրքով իրար ձեռքեր բռնել, որից հետո, առանց ձեռքերը բաց թողնելու, իրար թևերի տակով անցնել և շրջանը խճճել: Ինչ որ մի դիրքում ֆիքսվելուց հետո, խնդրում է որ յուրաքանչյուրն իր անցած ճանապարհովհետ գնա և շրջանը նորից վերականգնի: Այս ընթացքում ևս արգելվում է ձեռքերը բաց թողնել, միաժամանակ մասնակիցներին խնդրում է ֆիքսել, թե ինչքան ժամանակում իրենք շրջանը կերականգնեն:
Ժամանակը բարձրաձայն ֆիքսելուց հետո, նոից առաջարկում է խճճվել և արդ դիրով սպասել, մինչ ներս կհրավիրվի կամավոր դուրս եկած մասնակիցը, որին կառաջարկվի մասնակիցներին դասավորել շրջանաձև, պայմանով, որ նրանք իրենց ձեռքերը բաց չեն թողնելու: Մյուս պայմանն այն է, որ մասնակիցներին հարցեր չի կարող տալ, միայն կարող է ուղղորդել, թե ով ինչպես անցնի: Նորից ֆիքսվում է ժամանակը, որը չպետք է ավել լինի, քան 3 րոպեն, հաշվի անելով այն հանգամանքը, որ մասնակիցները, սովորաբար առաջին փուլի ժամանակ հետ՝ իրենց տեղերն են կանգնում 20-30 վայրկյանում:

Քայլ 2. Գործնական վարժությունն ավարտելուց հետո մասնակիցները նստում են իրենց տեղերում և դասընթացավարն առաջարկում է նրանց կիցվել իրենց տեսակետներով, թե ինչ հետևություններ արեցին այս գործնական վարժությունից հետո:
Ենթադրվող պատասխաններ՝

- Առաջին անգամ, երբ յուրաքանչյուրը հիշում էր իր անցած ճանապարհը, կարողացավ շատ արագ հետ գնալ նույն ճանապարհով:
- Առաջին դեպքում բոլորը պատասխատասխանատվություն էին կրում արդյունքի համար, իսկ երկրորդ անգամ միայն մեկն էր արդ պատասխանատվությունը կրում:
- Երկրորդ անգամ, քանի որ հաղորդակցությունը միակողմանի էր և մասնակիցները իրավունք չունեին հուշելու, կամ պատասխանելու կամավոր դուրս եկած մասնակցի հարցերին, ավելի երկար տևեց հետ շարվելու գործընթացը, կամ էլ այդ մասնակիցը 3 րոպեում չկարողացավ շրջանաձև դասավորել խմբին:
- Կամավոր մասնակիցը տեղյակ չէր, թե ինչպես են անցել մասնակիցները, որ այդ դիրքերով են կանգնած:
-

<u>Քայլ 3.</u> Դասընթացավարը ամփոփում է տեսակետները և ավելացնում, որ մասնակցությունը արդյունավետ է, եթե քաղաքացիները մասնակցում են որոշումների կայացման գործընթացին: Համատեղ առաջնորդության սկզբունքը առաջին հերթին ենթադրում է քաղաքացիների մասնակցություն որոշումների կայացմանը, այսինքն նրանց տեսակետների և մոտեցումների հաշվի առնում որոշումների ընդունման ժամանակ:

Նիստ 2
Մասնակցության սկզբունքները (Շարունակություն)
Կոռուպցիայի սահմանումը և դրսևորումները

Խնդիրները՝	Այս նիստի վերջում մասնակիցները կիմանան՝ • Մասնակցության սկզբունքները • Կոռուպցիայի սահմանումը և դրսևորումները • Կոռուպցիայի հաղթահարման եղանակները • Ինչ է կառուցողական ներգրավվածությունը • Ինչ է կատարողականի մասնակցային մոնիտորինգը • Որոնք են քաղաքացիական մասնակցության խոչընդոտները/ռիսկերը
Ընդհանուր ժամանակը՝	1 ժամ 40 րոպե
Նիստի նկարագրություն՝	1. Մասնակցության սկզբունքները (Շարունակություն) (20 րոպե) 2. Կոռուպցիայի սահմանումը և դրսևորումները (20 րոպե) 3. Կոռուպցիայի հաղթահարման եղանակները (10 րոպե) 4. Կառուցողական ներգրավվածություն (10 րոպե) 5. Կատարողականի մասնակցային մոնիտորինգ (10 րոպե) 6. Քաղաքացիական մասնակցության խոչընդոտները/ռիսկերը (30 րոպե)
Նյութերը՝	✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ, ✓ Մեկ 0,5 լիտրանոց շիշ, մեջը լցրած տարբեր գույնի կարամելներ
Բաժանվող նյութերը՝	• Կառուցողական մասնակցության խմբային վարժության թերթիկներ
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Տեսական նյութի ներկայացում • Անհատական վարժություն • Ամփոփում

1. Մասնակցության սկզբունքներ (Շարունակություն) (20 րոպե)

Խմբային աշխատանք, ամփոփում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին իրար փոխանցելով նայել և թղթի վրա գրել, թե 0.5 լիտրանց պլաստիկե շշի մեջ ինչքան կոնֆետ է լցրած իրենց կարծիքով: Ընդ որում մասնակիցներ 10 հատի տարբերությամբ կարող են գրել առավելագույն և նվազագույն թիվը: Այնուհետև մասնակիցների ասած թվերը անց են կացվում ֆլիպչարտ թղթի վրա գծված գրաֆիկի մեջ: Դրանից հետո որոշվում է մասնակիցների ասած նվազագույն և առավելագույն քանակների միջին թվաբանականներն ու գծվում միջին թվաբանակ նվազագույն և առավելագույն գծերը:

Դրանից հետո մասնակիցներին ասվում է, որ իրենք հիմա նորից հնարավորություն ունեն ասելու, թե պլաստիկե շշի մեջ ինչքան կոնֆետ կա: Սակայն այս անգամ արդեն միայն մի թիվ են ասելու: Այն մասնակիցը, ում ասած թիվը կհամընկնի շշի մեջ գտնվող կոնֆետների թվի հետ, կամ ամենամոտը կլինի կշահի այդ շիշը:

Թվերը թղթի վրա գրելուց հետո մասնակիցները բարձրաձայն հայտարարում են և նորից միջին թվաբանական է հանվում ու գծվում գիծը:

Դրանից հետո շիշը մեջտեղից կտրվում է ու մասնակիցներից մեկը հաշվում է կոնֆետների քանակը և այն մասնակիցը, ով ճիշտ կամ ամենամոտն է ասել կոնֆետների թիվը, ստանում է մրցանակ շշի ողջ պարունակությունը

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը առաջարկում է մասնակիցներին ներկայացնել իրենց կարծիքը թե ինչ կերպ կմեկնաբանեն գործնական վարժություն և մասնակցության 5 սկզբունքների հետ ինչ առընչություն տեսան այս վարժությունում:

Վերջում դասընթացավարը ամփոփում է բոլորի կարծիքները և մեկ անգամ ևս նշում այս վարժության կապը մասնակցության սկզբունքների հետ

2. Կոռուպցիայի սահմանումը և դրսևորումները (20 րոպե)

Մտքերի գրոհ, ամփոփում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ, հարցնելով մասնակիցներին, թե իրենք ի՞նչ է նշանակում Կոռուպցիա տերմինը: Տեսակետները գրի է առնում ֆլիպչարտ թղթի վրա:

Լսելով մասնակիցների պատասխանները ամփոփում է և ներկայացնում, որ կոռուպցիան (corruptio) լատիներեն բառ է, որը

նշանակում է այլասերում, քայքայում, կաշառում, փչացում՝ բարքերի, սովորույթների վատացում, մարդկային լավագույն հատկանիշների արժեզրկում: Հասկացությունը կարող է ունենալ ֆիզիկական իմաստ, ինչպես «որևէ բանի քայքայում կամ փչացում, հատկապես մասնատման կամ տարրերի քայքայման ճանապարհով, որն ուղեկցվում է փտումով…», կամ բարոյական իմաստ, ինչպես «փչացում կամ բարոյական անկում… հանրային պարտականությունների կատարման ամբողջականության խեղաթյուրում՝ կաշառառության կամ լավ վերաբերմունքի միջոցով »:

<u>Քայլ 2.</u> Նորից էլ կազմակերպում է մտքերի գրոհ «Իսկ որո՞նք են կոռուպցիայի դրսևորումներ»:

<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- կաշառք
- հովանավորչություն
- պաշտոնական դիրքի չարաշահում
- անձնական շահի ստացում ի վնաս հասարակության
- «ատկատներով» հանդերձ պետական տենդերները
- հարկերը թաքցնելը և չվճարելը
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները և ներկայացնում, որ կոռուպցիոն դրսևորումները կարող են տարատեսակ լինել, իսկ նրանցին հիմնականներն են՝

- կաշառքը
- հովանավորչությունը
- պաշտոնական դիրքի չարաշահումը անձնական շահի ստացման համար ի վնաս հասարակության
- իր տնօրինությանը հանձնված գույքի վատնումը, յուրացումը, հափշտակումը
- հարկերը թաքցնելը և չվճարելը
- շահերի բախման դեպքում շահը հոգուտ օգտագործելը
- քաղաքական կոռուպցիան

Բացի այդ ներկայացնում է, թե որ դեպքում է կոռուպցիան կրում համակարգային բնույթ:

3. Կոռուպցիայի հաղթահարման եղանակները (10 րոպե)

Ընդհանուր քննարկում, ամփոփում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում, թե ինչ եղանակներով կարելի է հաղթահարել կոռուպցիան և ներկայացնում է կոռուպցիայի հաղթահարման եղանակները, տալով նրանց մեկնաբանությունը՝

- Համընդհանուր բարեփոխումներ
- «Ազնվության կղզյակ»
- ԸՆտրությունների միջոցով նոր իշխանության ձևավորում
- Հեղափոխություն

4. Կառուցողական ներգրավվածություն (10 րոպե)

Ընդհանուր քննարկում , խմբային վարժություն, ամփոփում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը մասնակիցների հետ հարց ու պատասխանի միջոցով քննարկում է կառուցողական ներգրավվածության հասկացողությունը և կարևորությունը: Ամփոփում է քննարկման արդյունքները:

Քայլ 2. Մասնակիցները բաժանվում են 4 խմբի:
Առաջին և երրորդ խմբերին տրվում է **«Ի՞նչ կշահեն ծառայություն մատուցողները մասնակցության գործընթացից»** թերթիկը:
Երկրորդ և չորրորդ խմբերին տրվում է **«Ի՞նչ կշահեն ծառայություն ստացողները մասնակցության գործընթացից»** թերթիկը:
Խմբերին տրվում է 10 րոպե ժամանակ, ավելացնելու թերթիկների վրա նշված հանգամանքները: Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց խմբային աշխատանքների արդյունքները և պատասխանում են մնացած մասնակիցների հարցերին:

Քայլ 3. Դասընթացավարը ամփոփում է խմբային աշխատանքների արդյունքները և ֆիքսում, որ Կառուցողական ներգրավվածությունը մասնակցային գործընթացի համար և՛ նախապայման է, և՛ կարևոր առանձնահատկություն, և ունի մի քանի բնութագրիչներ.

- Այն ներառում է քաղաքացիական խմբերի և կառավարության միջև վստահության ձևավորումը (ձևավորում է խթաններ):
- Այն հիմնված է փաստերի վրա (օգտագործում է տվյալներ և տեղեկատվություն):
- Այն միտված է դեպի արդյունքները կամ լուծումները (ունի կոնկրետ արդյունքներ, որոնք օգուտ են տալիս մարդկանց, հատկապես՝ աղքատներին):
- Այն իրենից ներկայացնում է հաստատուն և կայուն ներգրավվածության տեսակ (աշխատում է հասուն գործընկերությունների ձևավորման ուղղությամբ):

5. Կատարողականի մասնակցային մոնիտորինգ (10 րոպե)

Ընդհանուր քննարկում, մտքերի գրոհ (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը մասնակիցների հետ հարց ու պատասխանի միջոցով քննարկում է թե ինչ է իրենից ներկայացնում Կատարողականի մասնակցային մոնիտորինգը և ինչ հնարավոր քայլերից է բաղկացած այն:

Քայլ 2. Ամփոփելով մասանակիցների տեսակետները, ներկայացնում է, որ Կատարողականի մասնակցային մոնիտորինգը իրենից ներկայացնում է մասնակցային ներգրավվածության հատուկ տեսակ, որը վերաբերում է մատուցվող հանրային ծառայությունների դիտարկման և գնահատման գործընթացում քաղաքացիների, ծառայություն ստացողների կամ ՔՀԿ-ների ներգրավվածությանը, ինչպես նաև դրա իրականացման չորս քայլերը՝

1. Ծառայությունների իրականացման դիտարկում՝ նկատի ունենալով ծրագրի հիմնական նպատակը:
2. Ծրագրի և չափանիշների համեմատում իրական հաջողությունների հետ:
3. Ծրագրի կոնկրետ ասպեկտների ստուգում դրա տարբեր փուլերի ընթացքում:
4. Առաջարկությունների ներկայացում՝ ըստ անհրաժեշտության:

6. Քաղաքացիական մասնակցության խոչընդոտները/ռիսկերը (30 րոպե)

Ընդհանուր քննարկում , խմբային վարժություն, մտքերի գրոհ, ամփոփում (30 րոպե)

Քայլ 1. Մասնակիցները բաժանվում են 3 խմբի:
Խմբերին առաջարկվում է քննարկել և ֆլիպչարտ թղթի վրա գրել այն հնարավոր հանգամանքները, որոն կարող են խոչընդոտել քաղաքացիական մասնակցությանը:
Խմբերին տրվում է 10 րոպե ժամանակ: Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց խմբային աշխատանքների արդյունքները և պատասխանում են մնացած մասնակիցների հարցերին:

Քայլ 2. Դասընթացավարը ամփոփում է խմբային աշխատանքների արդյունքները և ֆիքսում, որ քաղաքացիական մասնակցության առավել կարևոր մարտահրավերներն են՝

- Ծառայություն մատուցողների կողմից ցուցաբերվող դիմադրությունը. սա ամենալուրջ խոչընդոտն է:
- Համայնքում ուժեղ և ակտիվ քաղաքացիական հասարակության բացակայությունը:

Այլ մարտահրավերները ներառում են՝

- ✓ Վստահության պակասը
- ✓ Շահագրգիռ կողմերի միջև համագործակցության պակասը
- ✓ Տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը
- ✓ Իրավունքների և պարտականությունների մասին սահմանափակ գիտելիքները
- ✓ Անհայտ հետևանքների հանդեպ վախը
- ✓ Ինքնավստահության պակասը
- ✓ Մասնակցային կառուցների սահմանափակ քանակը կամ բացակայությունը
- ✓ Տվյալ ոլորտում հմտությունների, մասնակցային մշակույթի և փորձի պակասը
- ✓ Ռեսուրսների (օրինակ՝ փորձի, ժամանակի, դրամական միջոցների) պակասը
- ✓ Խնդիրների հանդեպ լրատվամիջոցների ուշադրության պակասը
- ✓ Անիրատեսական ակնկալիքները
- ✓ Մասնագիտական օժանդակության կարիքի մասին իրազեկվածության պակասը
- ✓ Հակառակ արդյունքի ռիսկը
- ✓ Ավելի լայն հիմնախնդիրների փոխարեն կենտրոնացումը իրավիճակային խնդրի վրա:

Քայլ 3. Դասընթացավարը կազմակերպում է մքերի գրոհ թե վերը նշված մարտահրավերներին ինչպես կարելի է արձագանքել ու հաղթահարել:

Ենթադրվող պատասխաններ՝

- ✓ Քաղաքացիական կրթություն և դասընթացներ
- ✓ Հանրային իրազեկության քարոզարշավներ
- ✓ Հաղորդակցության ռազմավարություններ
- ✓ Ցանցերի և հարաբերությունների կառուցում
- ✓ Փորձի փոխանակում
- ✓ Երկկողմ համագործակցություն
- ✓ Ֆինանսական միջոցների հայթայթում
- ✓ Կառավարման հմտություններ
- ✓ Կամավորականության խթանում
- ✓

Քայլ 4. Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները:

Նիստ 3
Մասնակցային մոնիտորինգի ներածություն
Նախապատրաստական գործողություններ

Խնդիրները՝

Այս նիստի վերջում մասնակիցները

կիմանան՝

- Ովքեր են Ծրագրի մասնակիցները, ինչպես ներգրավել նրանց և ձևավորել կարողությունները
- Որոնք են հաջողությանը նպաստող գործոններ
- Որոնք են մոնիտորինգի նպատակները
- Ինչ նախապատրաստական գործողություններ պետք է կատարել մասնակցային մոնիտորինգի համար
- Մասնակցային մոնիտորինգն արդյոք ճի՞շտ մոտեցում է տվյալ համատեքստում

Կկարողանան

- Կատարել Չափանիշների քարտեզագրում
- Որոշել մոնիտորինգի աշխարհագրությունը
- Ներգրավել շահագրգիռ կողմերին

Ընդհանուր ժամանակը՝

1 ժամ 30 րոպե

Նիստի նկարագրություն՝

1. Հաջողությանը նպաստող գործոններ (15 րոպե)
2. Մոնիտորինգի նպատակները (5 րոպե)
3. Նախապատրաստական գործողություններ(10 րոպե)
4. Մասնակցային մոնիտորինգն արդյոք ճի՞շտ մոտեցում է տվյալ համատեքստում (10 րոպե)
5. Չափանիշների քարտեզագրում (10 րոպե)
6. Մոնիտորինգի աշխարհագրության որոշում (10 րոպե)
7. Շահագրգիռ կողմերի ներգրավում (5 րոպե)
8. Ծրագրի մասնակիցների ներգրավում և կարողությունների ձևավորում (5 րոպե)

9. Առանցքային խումբը (Սկիզբ 20 րոպե)

- Առանցքային խմբի պարտականությունները
- Տեղական համակարգող
- Առանցքային խմբի ուսուցումը և կարողությունների ձևավորումը
- Գիտելիքի ոլորտներ

✓ Հիմնական ոլորտ 1: Լավ կառավարում և սոցիալական հաշվետվողականություն

✓ Հիմնական ոլորտ 2: Կառուցողական ներգրավում

✓ Հիմնական ոլորտ 3: Կատարողականի մոնիտորինգ

	• Գործընկերությանը պաշտոնական բնույթի հաղորդում և ծրագրի մեկնարկը
Նյութերը՝	✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,
Բաժանվող նյութերը՝	• Կառուցողական մասնակցության խմբային վարժության թերթիկներ
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Տեսական նյութի ներկայացում • Խմբային վարժություն • Ամփոփում

1. Հաջողությանը նպաստող գործոններ (15 րոպե)

Ընդհանուր քննարկում , խմբային վարժություն, ամփոփում (15 րոպե)

Քայլ 1. Մասնակիցները բաժանվում են 3 խմբի:
Խմբերին տրվում է **«Ի՞նչ գործոնների դեպքում է հաջողվում քաղաքացիների մասնակցությունը և ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ դրա համար»** թերթիկը, որը մասնակիորեն լրացված է:
Խմբերին տրվում է 5 րոպե ժամանակ, ավելացնելու թերթիկների վրա նշված հանգամանքները: Ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց խմբային աշխատանքների արդյունքները և պատասխանում են մնացած մասնակիցների հարցերին:

Քայլ 2. Դասընթացավարը ամփոփում է խմբային աշխատանքների արդյունքները և ֆիքսում, որ հանրային մոնիտորինգի իրականացման հաջողությունը պայմանավորված է մի շարք նախապայմաններով, որոնք են.

- Քաղաքացիական հասարակության կարողություններ:
- Աջակցող կամ առնվազն չխոչընդոտող տեղական կառավարման մարմին:
- Արհեստավարժ իրականացնող կառույց, որն ունի բավարար ինստիտուցիոնալ կարողություններ և դրական հեղինակություն, որպեսզի մոնիտորինգն իրականացնի արհեստավարժ ու թափանցիկ ձևով և արդյունքներն արդյունավետորեն հաղորդի շահագրգիռ բոլոր կողմերին:
- «Ճիշտ տեղ և ժամանակ». չնայած անորոշությանը, սա առանցքային գործոն է, քանի որ բոլոր նախորդ հիմնական պայմանները չեն փոխարինում յուրաքանչյուր դեպքի քաղաքական և սոցիալական հանգամանքների մանրամասն գնահատմանը, որպեսզի որոշվի, թե որքանով են պայմանները բարենպաստ՝ մասնակցային մոնիտորինգի հաջողությունը առավելագույնի հասցնելու համար:

2. Մոնիտորինգի նպատակները (5 րոպե)

Մտքերի գրոհ (5 րոպե)

Քայլ 1. Մասնակիցների հետ կազմակերպվում է մտքերի գրոհ մոնիտորինգի նպատակների վերաբերյալ, թե ինչի կհանգեցնի այն: Տեսակետները գրի է առնվում ֆլիպչարտ թղթի վրա:
Ենթադրվող պատասխաններ՝

- Կոռուպցիայի նվազմանը
- Ծառայությունների մատուցման արդյունավետության

բարձրացմանը
- Տեղական կառավարման մարմնի և համայնքների միջև կապերի բարելավմանը
- Ծառայություններ մատուցողների և համայնքի միջև կապերի բարելավմանը:
-
-

<u>Քայլ 2.</u> Մտքերի գրոհի արդյունքները դասընթացավարը ամփոփում է և ներկայացնում, որ հիմնական հետևանքները կհանգեցնեն՝
- Կոռուպցիայի նվազմանը
- Տեղական կառավարման մարմնի և համայնքների միջև կապերի բարելավմանը
- Ծառայություններ մատուցողների և համայնքի միջև կապերի բարելավմանը:

3. Նախապատրաստական գործողություններ (10 րոպե)

Ընդհանուր քննարկում , մտքերի գրոհ (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը մտքերի գրոհի միջոցով վեր է հանում մասնակիցների տեսակետները նախապատրաստական գործողությունների վերաբերյալ:
<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>
- Մոնիտորիգի ենթակա ոլորտների ճշտում
- Այդ ոլորտի վերաբերյալ մոնիտորինգ իրականացնող թիմի անդամների կարողությունների զարգացում, այդ թվում տվյալ ոլորտի վերաբերյալ իրազեկման բարձրացում
- Տվյալ ոլորտում իրականացվող լիազորություններից առավել կարևորների ընտրություն
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները և նշում նախապատրաստական աշխատանքների կարևոր կետերը՝
- Հետաքրքրության առարկա հանդիսացող տարածքում կամ համայնքում ընտրե՛ք այն ծրագրերը կամ ոլորտները, որտեղ առավել շատ են բացահայտվել կոռուպցիոն ռիսկեր.
- Հետազոտե՛ք բյուջետային գործընթացին, հատկացումներին, պատասխանատվության բաշխմանը և կատարողականին վերաբերելի չափանիշները՝ կապված այն հանրային ծառայությունների ընտրության հետ, որոնք մեծ կարևորություն ունեն տարածքում կամ համայնքում: Ընտրված ծրագիրը կամ ծառայությունը պետք է ունենան չափանիշների շարք, որոնք

հարաբերականորեն պարզ են մոնիտորինգի ենթարկվելու համար (քանակի, որակի, ժամանակի և գործընթացների առումով):

- Գաղափար կազմե՛ք տեղական ինքնակառավարման մարմնի կամ ծառայություն մատուցողի և համայնքի անդամների միջև առկա կապերի մասին: Որքանո՞վ են նրանք միմյանց վստահում և պատրա՞ստ են արդյոք համագործակցության:

4. Մասնակցային մոնիտորինգն արդյոք ճի՞շտ մոտեցում է տվյալ համատեքստում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով մասնակիցների հետ սահմանում է, թե որ համատեքստում արդյունավետ կլինի անցկացնել մասնակցային մոնիտորինգ: Քննարկման արդյունքները ամփոփում է նշելով, որ այդ ոլորտները պետք է նշանակալի լինեն ծառայություն ստացողների համար և նաև հնարավոր լինի հստակ չափանիշներ ունենալ մոնիտորինգ իրականացնելու համար

5. Չափանիշների քարտեզագրում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում , մտքերի գրոհ (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը մտքերի գրոհի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե չափանիշ ասելով ինչ է նկատի առնվում, որից հետո վեր է հանում մասնակիցների տեսակետները թե չափանիշները ինչ հնարավոր ցուցիչներ կարող են ունենալ մոնիտորինգի իրականացման համար:

<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Քանակական
- Որակական
- ժամկետային
- Ֆինանսական ծախսերի
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները և նշում, որ չափանիշները ունեն հինգն ցուցիչներ՝

- Ժամանակ
- Արժեք
- Քանակ
- Որակակ
- Գործընթաց

Այնուհետև ներկայացնում է յուրաքանչյուր ցուցիչի էությունը:

6. Մոնիտորինգի աշխարհագրության որոշում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը հարց ու պատասխանի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե չափորոշիչներ կարող են ընտրել, որոնց դեպքում մոնիտորինգը առավելագույն ազդեցությունը կունենա:

Քայլ 2. Դասընթացավարը ամփոփում է քննարկման արդյունքները և նշում, որ պետք է նկատի ունենալ այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ բնակչության ժողովրդագրական կազմը, թիվը, քաղաքային/գյուղական համայնքները, տարածքի/թաղամասի սոցիալ-տնտեսական մակարդակը, կոռուպցիոն դրսևորումների հաճախականությունը և այլն:
Որոշման կայացման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել՝ արդյոք մոնիտորինգը նպատակ ունի ներառել ամբողջ բնակավայրը (տվյալ տարածքում/համայնքում), թե պետք է իրականացնել բնակավայրերի ներկայացուցչական ընտրանք, թե կան նախապես հայտնի կրիտիկական տարածքներ: Այս փուլում հիմնական մարտահրավերն է՝ բացահայտել, թե որտեղ մոնիտորինգը կտա ամենաէական արդյունքները:

7. Շահագրգիռ կողմերի ներգրավում (5 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը հարց ու պատասխանի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե ովքեր են մոնիտորինգի համար շահագրգիռ կողմեր հանդիսանում և ինչպես պետք է նրանց ներգրավել գործընթացի մեջ:

Քայլ 2. Դասընթացավարը ամփոփում է քննարկման արդյունքները և նշում, որ օգտակար է սկսել շահագրգիռ կողմերի քարտեզագրումից՝ հիմք ընդունելով մոնիտորինգի համար ընտրված ծրագրի (ծրագրերի) մասին հիմնական տեղեկությունները: Շահագրգիռ կողմերը, որոնց անհրաժեշտ է ներգրավել քարտեզագրման ընթացքում, ներառում են հանրային և ոչ հանրային դերակատարներին, որոնց ռեսուրսները և գործողություններն ազդում են ընտրված ծրագրի կատարողականի վրա, ինչպես նաև՝ այն սպառողներին, անհատներին և խմբերին, որոնք թեկուզ անուղղակի կերպով, սակայն ենթակա են ծառայության ազդեցությանը:

Հավանական շահագրգիռ կողմերն են.

- Տեղական մակարդակում գլխավոր գործադիր մարմինը
  ✓ Հաշվի առե՛ք մոնիտորինգի առարկա հանդիսացող բնակավայրի համայնքի ղեկավարին, որը հիմնական շահագրգիռ կողմերից մեկն է և ում ցանկալի կլիներ ներգրավել գործընթացում: Ենթադրվում է, որ համայնքի ղեկավարը, որպես հանրային պաշտոնյա, շահագրգռված է ապահովելու, որ իր ընտրողները տեղական կառավարման մարմնին դիտարկեն որպես արդյունավետ և ծախսախնայող ծառայություններ մատուցող:
- Տեղական կառավարման այլ պաշտոնյաներ
  ✓ Բացահայտե՛ք այն ոլորտի անմիջական պատասխանատու պաշտոնյաներին, որում պետք է իրականացվի ծրագիրը,
- ՔՀԿ-ներ
  ✓ Բացահայտե՛ք այն ՔՀԿ-ներին, որոնք ընդգրկված են թիրախավորված ոլորտում/ծրագրում՝ ծնողների միավորումներ, հիվանդների միավորումներ կամ ջատագովության խմբեր, ֆերմերների կազմակերպություններ և այլն:
  ✓ Այլ ՔՀԿ-ներ՝ կանանց խմբեր, եկեղեցու հովանու ներքո գործող կազմակերպություններ, երիտասարդական ընկերակցություններ և այլն:

8. Ծրագրի մասնակիցների ներգրավում և կարողությունների ձևավորում (5 րոպե)

Ընդհանուր քննարկում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարց ու պատասխանի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե ովքեր կարող են լինել ծրագրի մասնակիցները և ամփոփելով քննարկման արդյունքները նշում է որ ծրագրի երկու հիմնական խմբեր՝ առանցքային և քաղաքացի մոնիտորների խմբերն են:

9. Առանցքային խումբը (Սկիզբ 20 րոպե)

Ընդհանուր քննարկում, խմբային աշխատանք, ամփոփում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարց ու պատասխանի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե ինչ դերակատարություն կարող է ունենալ առանցքային խումբը, որոնք կարող են լինել առանցքային խմբի պարտականությունները, ինչ պարտականություններ կունենա տեղական համակարգողը, առանցքային խմբի անդամների ուսուցման և կարողությունների զարգացման ի՞նչ ոլորտներ կարող են լինել,

ինչպե՞ս գործընկերությանը պաշտոնական բնույթ հաղորդել:

Քայլ 2. Մասնակիցներին բաժանում է 5 խմբի և յուրաքանչյուրին տրվում է համապատասխան վերնագրով թերթիկը՝

- Առանցքային խումբ, խմբի պարտականությունները, տեղական համակարգող
- Առանցքային խմբի ուսուցումը և կարողությունների ձևավորումը, Գիտելիքի ոլորտներ, Հիմնական ոլորտ 1: Լավ կառավարում և սոցիալական հաշվետվողականություն
- Հիմնական ոլորտ 2: Կառուցողական ներգրավում
- Հիմնական ոլորտ 3: Կատարողականի մոնիտորինգ
- Գործընկերությանը պաշտոնական բնույթի հաղորդում և ծրագրի մեկնարկը:

Խմբերին տրվում է 15 ժամանակ ծանոթանալու և քննարկելու թերթիկի վրա նշված տեսական նյութը:

Նիստ 4
Ծրագրի մասնակիցների ներգրավում և կարողությունների ձևավորում

Խնդիրները՝

Այս նիստի վերջում մասնակիցները կիմանան՝

- Ովքեր են առանցքային խումբը, որոնք են առանցքային խմբի պարտականությունները, ինչ պարտականություններ ունի տեղական համակարգող, ինչ պետք ուսուցանել առանցքային խմբին և ինչ կարողություններ պետք է ձևավորել
- Գիտելիքի ինչ ոլորտների պետք է տիրապետեն առանցքային խմբի անդամները, այն է՝

Հիմնական ոլորտ 1: Լավ կառավարում և սոցիալական հաշվետվողականություն, Հիմնական ոլորտ 2: Կառուցողական ներգրավում, Հիմնական ոլորտ 3: Կատարողականի մոնիտորինգ

- Ինչպես գործընկերությանը պաշտոնական բնույթի հաղորդել և ծրագրի մեկնարկ տալ
- Ովքեր են մոնիտորինգային խումբի անդամները, ինչպես ընտրել և համախմբել նրանց, ինչպես զարգացնել քաղաքացի մոնիտորների կարողությունները

Ընդհանուր ժամանակը՝

1 ժամ 20 րոպե

Նիստի նկարագրություն՝

1. Առանցքային խումբը (Շարունակություն 30 րոպե)

- Առանցքային խմբի պարտականությունները
- Տեղական համակարգող
- Առանցքային խմբի ուսուցումը և կարողությունների ձևավորումը
- Գիտելիքի ոլորտներ
- ✓ Հիմնական ոլորտ 1: Լավ կառավարում և սոցիալական հաշվետվողականություն
- ✓ Հիմնական ոլորտ 2: Կառուցողական ներգրավում
- ✓ Հիմնական ոլորտ 3: Կատարողականի մոնիտորինգ
- Գործընկերությանը պաշտոնական բնույթի հաղորդում և ծրագրի մեկնարկը

2. Մոնիտորինգային խումբը (40 րոպե)

- Մոնիտորների ընտրում և համախմբում
- Քաղաքացի մոնիտորների կարողությունների զարգացում
- Կողմնորոշիչ հրահանգավորում

- Ծրագրի ներածություն
- Ի՞նչն է ենթարկվելու մոնիտորինգի
- Ինչպե՞ս է իրականացվելու մոնիտորինգը
- Բաց քննարկում
- Համատեղ պլանավորում
- Հանձնառության երաշխիք
- Կիրառական ուսուցանում և ուղղորդում

3. Օրվա արդյունքների ամփոփում (10 րոպե)

Նյութերը՝ ✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,

Բաժանվող նյութերը՝
- Առանցքային խմբի ձևավորման, պարտականությունների, ուսուցման և կարողությունների զարգացման խմբային վարժության թերթիկներ
- Մոնիտորինգային խմբի ձևավորման, պարտականությունների, ուսուցման և կարողությունների զարգացման խմբային վարժության թերթիկներ

Մեթոդները՝
- Մտքերի գրոհ
- Բաց և փակ հարցեր
- Ընդհանուր քննարկումներ
- Տեսական նյութի ներկայացում
- Խմբային վարժություն
- Ամփոփում

1. Առանցքային խումբը (Շարունակություն 30 րոպե)

Խմբային աշխատանքի ներկայացում, ամփոփում (30 րոպե)

<u>Քայլ 1.</u> Մինչ ընդմիջում կատարած խմբային աշխատանքները խմբերի ներկայացուցիչները ներկայացնում են իրենց նյութը և պատասխանում են մասնակիցների հարցերին:
Դասընթացավարը ամփոփում է ներկայացված նյութը յուրաքանչյուր խմբից հետո:

2. Մոնիտորինգային խումբը (40 րոպե)

Ընդհանուր քննարկում, խմբային աշխատանք, ամփոփում (50 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը հարց ու պատասխանի միջոցով մասնակիցների հետ ճշտում է, թե ինչ դերակատարություն կարող է ունենալ մոնիտորինգային խումբը, ինչպես ընտրել և համախմբել մոնիտորներին, քաղաքացի մոնիտորների ինչ կարողություններ պետք է զարգացնել, ինչպես կողմնորոշիչ հրահանգավորում իրականացնել, ինչ է Ծրագրի ներածությունը, Ի՞նչն է ենթարկվելու մոնիտորինգի, Ինչպե՞ս է իրականացվելու մոնիտորինգը, ինչու է կարևոր բաց քննարկումը, ինչպես համատեղ պլանավորել գործընթացը, ինչու է կարևոր հանձնառության երաշխիքը, ինչպես իրականացնել մոնիտորների կիրառական ուսուցանումը և ուղղորդումը:

<u>Քայլ 2.</u> Մասնակիցների նախորդ վարժության ժամանակ բաժանված 5 խմբերից յուրաքանչյուրին տրվում է համապատասխան վերնագրով թերթիկը՝

- Մոնիտորինգային խումբը, Մոնիտորների ընտրում և համախմբում
- Քաղաքացի մոնիտորների կարողությունների զարգացում, Կողմնորոշիչ հրահանգավորում
- Ծրագրի ներածություն, Ի՞նչն է ենթարկվելու մոնիտորինգի
- Ինչպե՞ս է իրականացվելու մոնիտորինգը, Բաց քննարկում, Համատեղ պլանավորում
- Հանձնառության երաշխիք, Կիրառական ուսուցանում և ուղղորդում

Խմբերին տրվում է 15 ժամանակ ծանոթանալու և քննարկելու թերթիկի վրա նշված տեսական նյութը: Ավարտելուց հետո խմբերի ներկայացուցիչները ներկայացնում են իրենց նյութը և պատասխանում են մասնակիցների հարցերին:
Դասընթացավարը ամփոփում է ներկայացված նյութը յուրաքանչյուր

խմբից հետո:

3. Օրվա արդյունքների ամփոփում (10 րոպե)

Անհատական աշխատանք, ներկայացում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը առաջարկում է մասնակիցներին իրենց մոտ եղած բլոկնոտից մեկ էջ պոկել էջի վերևում գրել **«Լավ էր»** ու այդ վերնագրի տակ շարադրել թե ինչն իրենց դուր եկավ դասընթացի ժամանակ: Շարադրանքն ավարտելուց հետո գրել **«Ցանկալի է»** ու այդ վերնագրի տակ շարադրել թե ինչն իրենց այնքան էլ դուր չեկավ կամ պակաս էր դասընթացի ժամանակ, կուզենային որ ինչպես լիներ: Թերթիկը լրացվում են անանուն: Նշվում է, որ բոլորի գրած տեսակետները պետք է ընթերցվեն լսարանի առաջ:

Քայլ 2. Դասընթացավարը հավաքում է բոլորի կողմից լրացված թերթիկները և կարդում է:

Օր երկրորդ

Նիստ 1
Մոնիտորինգի անցկացում
Հետմոնիտորինգային գործողություններ

Խնդիրները՝	Այս նիստի վերջում մասնակիցները՝ • Կվերհիշեն նախորդ օրվա թեմաները **Կկարողանան կազմակերպել՝** • Մոնիտորինգի անցկացումը • Մոնիտորինգի արդյունքների մշակումը • Արդյունքների համախմբումը, վերլուծումը և ամփոփումը • Փոխանակման նիստը • Խնդիրների լուծման նիստը
Ընդհանուր ժամանակը՝	1 ժամ 30 րոպե
Նիստի նկարագրություն՝	1. Նախորդ օրվա թեմաների համառոտ կրկնություն (10 րոպե) 2. Մոնիտորինգի անցկացում (10 րոպե) 3. Մոնիտորինգի արդյունքների մշակումը (10 րոպե) 4. Արդյունքների համախմբում, վերլուծում և ամփոփում (10 րոպե) 5. Փոխանակման նիստ (10 րոպե) 6. Խնդիրների լուծման նիստ (40 րոպե)
Նյութերը՝	✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Տեսական նյութի ներկայացում • Ամփոփում

1. Նախորդ օրվա թեմաների համառոտ կրկնություն (15 րոպե)

Ընդհանուր քննարկում (15 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը խնդրում է մասնակիցներին շրջանաձև կանգնել և մասնակիցներից մեկին տալիս է թղթերով իրար վրա փաթաթված գունդ: Թղթերից յուրաքանչյուրի վրա գրված է նախորդ օրվա թեմաներից մեկի վերնագիրը կամ որևէ բարեմաղթանք: Առաջին մասնակիցը բացում է ամենավերևի թուղթը և կարդում է վրան գրվածը: Եթե գրվածը որևէ թեմայի վերնագիր է, ապա համառոտ ներկայացնում է այդ թեման, եթե բարեմաղթանք, ապա կարդում է և գունդը փոխանցում է մյուս մասնակցին: Փոխանցումը կատարվում է այնպես, որ բոլոր մասնակիցները հնարավորություն ունենան կարդալու: Վերջին թուղթը կարդալուց մասնակիցները նստում են իրենց տեղերում:

2. Մոնիտորինգի անցկացում (10 րոպե)

Մտքերի գրոհ, ամփոփում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը մտքերի գրոհի միջոցով մասնակիցներին հարցնում է, թե ինչ բաղադրիչներից կարող է բաղկացած լինել մոնիտորինգը:

Ենթադրվող պատասխաններ՝

- Մոնիտորինգի անցկացման պլանավորում
- Մոնիտորինգի իրականացում
- Արդյունքների ամփոփում
-

Քայլ 2. Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները և ներկայացնում, որ մոնիտորինգն ունի 3 բաղադրիչ՝

1. Յուրաքանչյուր մոնիտորինգային այցելության և տվյալների զեկուցման համար պլանավորման գործընթացի համակարգում
2. Փաստացի դիտարկում, երբ մոնիտորինգի գործիքն օգտագործվում է տվյալների հավաքագրման համար
3. Հետադարձ կապ՝ արձագանքելու մոնիտորինգի ընթացքում դիտարկված խնդիրներին:

3. Մոնիտորինգի արդյունքների մշակումը (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում, հարց ու

պատասխանի միջոցով մասնակիցներին հետ ճշտում է մոնիտորինգի արդյունքների մշակման կազմակերպման հարցերը և ամփոփում է մասնակիցների տեսակետները:

4. Արդյունքների համախմբում, վերլուծում և ամփոփում (15 րոպե)

Ընդհանուր քննարկում (15 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում, հարց ու պատասխանի միջոցով մասնակիցներին հետ ճշտում է թե ով պետք է կատարի մոնիտորինգի տվյալների հավաքագրումը, տվյալների բացերի ստուգումը, տեղեկատվության կազմակերպումը և միտումների ու խնդիրների բացահայտումը, ամփոփում է մասնակիցների տեսակետները:, ներկայացնելով, որ Շատ կարևոր է, թե ով է կատարում այս աշխատանքը: Իդեալական տարբերակում քաղաքացիներն իրենք պետք է վերապատրաստված լինեն իրենց իրականացրած մոնիտորինգի արդյունքների համախմբման և մեկնաբանման համար: Եթե սա հնարավոր չէ, ապա անհրաժեշտ է համոզված լինել, որ համայնքի անդամները վստահում են այն դերակատարին կամ կազմակերպությանը, ով այս գործառույթն իրականացում է:
Մոնիտորների հետ անցկացվող ժողովը կարող է վճռորոշ դեր կատարել արդեն իսկ համակցված և ամփոփված արդյունքները հաստատելու համար:

5. Փոխանակման նիստ (10 րոպե)

Մտքերի գրոհ, ամփոփում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ մասնակիցներին հետ փոխանակմանա նիստի նպատակների վերաբերյալ:
<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Մոնիտորների փորձի փոխանակումը
- Գործողությունների մասին մյուսներին իրազեկումը
- Որոշումների մասին մյուսներին իրազեկումը
- Ամփոփ արդյունքների ներկայացումը և մեկնաբանումը
-

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհի արդյունքները և ներկայացնում, որ փոխանակման նիստերն ուղղված են նաև հետևյալ նպատակներին.

- Խրախուսել մոնիտորների առավելագույն մասնակցություն,

որի համար կարող են օգտագործվել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են մետաքարտերը և փոքր խմբային վարժությունները
- Ապահովել նպաստավոր միջավայր բովանդակալից ուսուցման և ռեֆլեքսիայի համար
- Գնահատել մոնիտորների ջանքերը և շնորհավորել նրանց փորձառությունը:

6. Խնդիրների լուծման նիստ (40 րոպե)

Ընդհանուր քննարկում (40 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում, հարց ու պատասխանի միջոցով, օգտագործելով հետևյալ հարցերը՝
- Կառավարության ո՞ր մակարդակները պետք է ներկայացված լինեն:
- Ովքե՞ր են այն անձինք, որ կարող են որոշումներ ընդունել մինչ այդ պահը բարձրացված հարցերի վերաբերյալ:
- Ո՞վ ունի խնդիրն առաջ տանելու իրավասություն, այդ թվում՝ որոշակի գործողությունների բյուջետավորման ուղղությամբ:
- Համայնքային ո՞ր ղեկավարներին ու ինստիտուտներին (հանձնաժողովներ և այլն) արժե հրավիրել:
- Բարձրացվե՞լ են արդյոք հարցեր, որոնք առնչվում են այլ շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ միջազգային ՀԿ-ներին և եկեղեցիներին:
- Ո՞վ կարող է բացատրել, թե ինչու են որոշ ծառայություններ վատ իրականացվում, իսկ մյուսները՝ ոչ:

Յուրաքանչյուր հարցի քննարկումից հետո ամփոփվում է հնչած պատասխանները, որից հետո անցում է կատարվում մյուս հարցին:

Քայլ 2. Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում նիստին նախապատրաստվելու վերաբերյալ, անդրադառնալով հետևյալ կետերին, որոնց վերաբերյալ պետք պատրաստվեն ներկայացումներ՝
- Մոնիտորինգային ծրագրի ամենակարևոր մասերը և ձեռքբերումները
- Խնդիրներն ու դրանց վերաբերյալ առաջարկությունները
- Մոնիտորինգային նախաձեռնության ու դրա կայունության նախնական գնահատումը և հետադարձ կապը:

Յուրաքանչյուր հարցի քննարկումից հետո ամփոփվում է հնչած պատասխանները, որից հետո անցում է կատարվում մյուս հարցին:

Քայլ 3. Դասընթացավարը ներկայացնում է նիստի օրինակելի օրակարգը՝

Խնդրի լուծման նիստի առաջարկվող օրակարգ

Բացման խոսք
Երախտագիտության խոսք հյուրերին
Մոնիտորինգի ընդհանուր ներկայացում
Մոնիտորինգային ծրագրի կարևոր բացահայտումներն ու ձեռքբերումները
Ծառայության մատուցմանն առնչվող խնդիրներն ու առաջարկությունները
Բաց քննարկում
Մոնիտորինգային նախաձեռնության և կայունության նախնական գնահատում և հետադարձ կապ
Նիստի ամփոփ ներկայացում և հանձնառությունների ստանձնում
Փակում

<u>Քայլ 4.</u> Դասընթացավարը ներկայացնում է նիստի արդյունավետ անցկացման խորհուրդները՝

Մոնիտորինգ իրականացնողների փորձից քաղված առաջարկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել խնդիրների լուծման նիստի ժամանակ:

1. ՀԻՇԵ�lՔ ներառել փոխանակման նիստից ստացված արդյունքները: Օգտակար է, երբ որոշում կայացնողները տեսնում են դիտորդների տեսակետները:
2. ՍԿՍԵ՝Ք նիստը, որպես հիմնական նպատակ ունենալով որոշում կայացնողների հետ համագործակցությունը: Հիշե՝ք, որ դուք այնտեղ գտնվում եք ոչ թե միայն խնդիրները նրանց մատնացույց անելու, այլև դրանց լուծումներ առաջարկելու համար: Եթե նրանց ներկայացվում են վատ արդյունքներ, նրանք զգում են, որ իրենց աշխատանքը չեն կատարում և ստիպված են ընդունել պաշտպանական դիրք: Փորձե՝ք հեռու պահել նրանց պաշտպանական դերի մեջ մտնելուց՝ ուղղորդելով նրանց գտնելու լուծումներ՝ մատնացույց անելու փոխարեն:
3. ԲԱՑ ԵՂԵ՝Ք նրանց խոսքի հանդեպ: Հաճախ, ինչ նրանք են ասում, զուտ արդարացումներ չեն, այլ փաստացի սահմանափակումներ: Օգտակար է լսել նրանց ասածները և չընդունել դրանք որպես արդարացումներ:
4. ՄԻ՝ ՄԵՂԱԴՐԵՔ նրանց: Հաճախ ՔՀԿ անդամները որոշում կայացնողների հետ հաղորդակցվելիս արտահայտում են դժգոհություն՝ մոռանալով, որ նրանք այնտեղ են միասին խնդիրներ լուծելու համար: Մեղադրելը և մատնացույց անելը չեն լուծում խնդիրը: Դիմադրե՝ք «կծող» լինելու գայթակղությանը, այլ պարզապես ներկայացրե՝ք փաստերը:

<u>Քայլ 4.</u> Դասընթացավարը ներկայացնում է Պլանավորման աղյուսակի ձևանմուշը՝

Պլանավորման աղյուսակի ձևանմուշ						
Առաջնահերթ թեմա (թվարկեք յուրաքանչյուր խնդիրը)	**Գործողություն** (խնդիրը լուծելու համար անհրաժեշտ քայլերը)	**Ո՞վ է պատասխանատու** (անուն և կառույց)	**Ո՞վ է համապատասխանատու** (անուն և կառույց)	**Ավարտի ժամկետ** (եղեք իրատես)	**Ռեսուրսներ** (ի՞նչ է անհրա-ժեշտ գործողությունը կատարելու համար)	**Նշումներ**
Առողջության կենտրոնի մաքրությունը	- Ավելի մեծ աշխատակազմ - Համայնքներն օգտագործեն աղբարկղեր	- Տարածքի պաշտոնյա - Առողջության կենտրոնի հանձնաժողով	- Առողջության կենտրոնի բժիշկ - Առողջության կենտրոնի հավաքարար	- 2007թ. օգոստոսի 1 - 2007թ. հուլիսի 1		
Աշխատակազմի ճշտապահությունը	- Աշխատակազմը հետևի պաշտոնական ժամերին	- Առողջության կենտրոնի բժիշկ	- Առողջության կենտրոնի հանձնաժողով	- 2007թ. մարտի 2		
Աշխատակազմի վերաբերմունքը հաճախորդների հանդեպ	- Աշխատակազմն ըմբռնի հաճախորդների մտահոգությունները	- Բուժքույր	- Առողջության կենտրոնի հանձնաժողով			

Աղբյուրը՝ CARE, Malawi 2013

Նիստ 2
Հետմոնիտորինգային գործողություններ
Մոնիտորինգի գործիքները

Խնդիրները՝	Այս նիստի վերջում մասնակիցները՝ • Կիմանան թե որոնք են մոնիտորինգի գործիքները **Կկարողանան կազմակերպել՝** • Հանրային ներկայացումը • Կայունությունը և վերահսկումը • Մոնիտորինգի անցկացումը Քաղաքացիների արձագանքման քարտերով • Մոնիտորինգի անցկացումը Համայնքային գնահատման քարտերով
Ընդհանուր ժամանակը՝	1 ժամ 30 րոպե
Նիստի նկարագրություն՝	1. Հանրային ներկայացում (10 րոպե) 2. Կայունություն և վերահսկում (10 րոպե) 3. Մոնիտորինգի գործիքներ (5 րոպե) 4. Քաղաքացիների արձագանքման քարտեր (30 րոպե) 5. Համայնքային գնահատման քարտեր (35 րոպե)
Նյութերը՝	✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Տեսական նյութի ներկայացում • Ամփոփում

1. Հանրային ներկայացում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում Փոխանակման և խնդիրների լուծման նիստերից հետո արդյունքների հրապարակման անհրաժեշտության վերաբերյալ, շեշտադրելով, որ հրապարակմանը պետք է ներկա գտնվեն նրանք, ովքեր մասնակցել են նախկին նիստերին, այդ թվում՝ մամուլը, այլ ՔՀԿ-ները, մտահոգված քաղաքացիներն ու քաղաքական գործիչները: Կարևոր է, որպեսզի հանրային ներկայացումը լինի բաց համայնքի անդամների համար և պատշաճ կերպով լուսաբանվի՝ առավելագույնս տեսանելի լինելու համար

2. Կայունություն և վերահսկում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում մոնիտորինգի գործընթացի հետագա ընթացքի վերաբերյալ, նշելով, որ անհրաժեշտ են հաջորդող քայլեր՝ համատեղ կարգով պլանների իրականացումն ապահովելու և արդյունքները կոլեկտիվ կերպով մոնիտորինգի ենթարկելու համար: Որպեսզի այդ պրակտիկան ստանա ինստիտուցիոնալ բնույթ, անհրաժեշտ է կրկնել մոնիտորինգի ցիկլերը: Մոնիտորինգի գործիքի պարբերական կիրառումը տալիս է անհրաժեշտ տեղեկատվություն՝ գնահատելու, թե արդյոք տեղի են ունեցել որոշակի բարելավումներ, և ամրապնդում է մոնիտորների հմտություններն ու վստահությունն իրենց հանդեպ: Կրկնվող ցիկլը հանդիսանում է նաև սոցիալական հաշվետվողականության անքակտելի մասը, քանի որ այն միջոց է հավաստիանալու՝ արդյո՞ք համաձայնեցված հանձնառությունները կատարվել են, թե ոչ: Բացի դրանից, քաղաքացի մոնիտորներին, ինչպես նաև համայնքի ներկայացուցիչներին պարբերական տեղեկատվության տրամադրումը հանդիսանում է ցանկացած մոնիտորինգային նախաձեռնության կայունությունն ապահովող կարևորագույն տարր:

3. Մոնիտորինգի գործիքներ (5 րոպե)

Ընդհանուր քննարկում (5 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է,

որ, Մոնիտորինգի գործիքը պետք է ներառի հանրային ծառայության կամ սոցիալական ծրագրի մատուցման այն չափանիշները, որոնք երաշխավորում են ծառայությունների և ծախսերի արդյունավետությունը և կոռուպցիոն գործողությունների հսկողությունը:

Մոնիտորինգի գործիքները հետևյալ երեքն են՝

- **քաղաքացիների արձագանքման քարտեր,**
- **համայնքային գնահատման քարտեր**
- **սոցիալական աուդիտներ:**

4. Քաղաքացիների արձագանքման քարտեր (30 րոպե)

Ընդհանուր քննարկում, մտքերի գրոհ, խմբային աշխատանք (30 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ քաղաքացիների արձագանքման քարտերը (ՔԱՐՔ) փաստաթղթեր են, որոնք ստեղծվում են քաղաքացիների խմբերի կամ քաղաքային իշխանությունների կողմից՝ ներկայացնելու համայնքի համար կարևոր հարցերի շուրջ անցկացված հարցումների արդյունքները: Հարցման ձևով ուսումնասիրություն կատարելիս կարող են օգտագործվել ինքուրույնաբար լրացվող հարցաթերթիկներ (անկետա) կամ իրականացվել հարցազրույցներ՝ կոնկրետ խնդիրների մասին մարդկանց կարծիքները ստանալու նպատակով:

Քայլ 2. Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ քաղաքացիների արձագանքման քարտեր նպատակի վերաբերյալ:

Ենթադրվող պատասխաններ՝

- Քաղաքացիների տեսակետները մատուցվող ծառայությունների վերաբերյալ վերհանելը
- Ծառայությունների թերությունները նշելը
- Ծառայություններից բավարարված, կամ անբավար լինելու հանգամանքը
- Վստահությունը գործընթացի նկատմամբ
-

Քայլ 3. Դասընթացավարը ամփոփում է արդյունքները և ներկայացնում, որ ՔԱՐՔ-երը օգտագործվում են այն իրավիճակներում, երբ զգացվում է պահանջարկի վերաբերյալ այնպիսի տվյալների պակաս, ինչպիսիք են՝ հանրային ծառայությունների որակի վերաբերյալ ընկալումն ու դրանցից բավարարվածությունը: Համակարգված կերպով հավաքելով և տարածելով հանրային արձագանքներն ու համեմատելով ծառայության մատուցման կատարողականը տարածքների կամ ոլորտների հետ, ՔԱՐՔ-երը ծառայում են որպես պետության կողմից տնօրինվող մենաշնորհների համար

«մրցակցությանը փոխարինող» գործոն, որոնց դեպքում առկա չէ որևէ խթան՝ իրենց հաճախորդների կարիքների հանդեպ լինելու նույնչափ արձագանքող, որքան մասնավոր ընկերություններն են:

Քայլ .4 Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 3 խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է Գործիքների վերաբերյալ բաժանվող նյութը: Խմբերը ծանոթանում են բաժանվող նյութին, քննարկում և ավարտելուց հետո ներկայացնում մյուս մասնակիցներին: Վարժության համար տրվում է 10 րոպե ժամանակ:
Խմբերի ներկայացուցիչները տեսակետները ներկայացնելուց հետո պատասխանում են մասնակիցների հարցերին:

5. Համայնքային գնահատման քարտեր (35 րոպե)

Ընդհանուր քննարկում, մտքերի գրոհ, խմբային աշխատանք (35 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ «Համայնքային գնահատման քարտ» (ՀԳՔ) գործընթացը համայնքային մոնիտորինգի գործիք է, որը քաղաքացիների արձագանքման քարտի նման հավաքագրում է տեղեկատվություն հանրային ծառայությունների որակի մասին: Այնուամենայնիվ, ՀԳՔ-ի մեթոդը տարբերվում է ՔԱՐՔ-ից նրանով, որ իրականացվում է համայնքային կտրվածքով և ներառում է քաղաքացիների/օգտագործողների, ծառայություն մատուցողների ու համապատասխան պաշտոնյաների միջև անմիջական փոխգործունեությունը: Այս կերպ ծառայություն մատուցողներին ու տեղական ինքնակառավարման մարմիններին կապելով համայնքի հետ՝ ՀՔԳ-ի մեխանիզմը խրախուսում է ծառայություն մատուցողների և օգտագործող քաղաքացիների միջև ուղիղ հետադարձ կապի մեխանիզմների զարգացումը, տեղական մակարդակում ձևավորում է կարողություններ, առավել լսելի է դարձնում քաղաքացիների ձայնը և զորացնում է համայնքը: Քանի որ սա համայնքային գործընթաց է, որը ենթադրում է նշանակալից ներգրավվածություն և կոլեկտիվ գործունեության կարողություններ, առավել կիրառելի է փոքր համայնքներում կամ գյուղական միջավայրերում:

Քայլ 2. Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ ՀՔԳ-ի նպատակի վերաբերյալ:
Ենթադրվող պատասխաններ՝

- Ստանալ հանրային ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ տվյալներ
- Ծառայությունների արդյունավետության և թափանցիկության

չափելի ցուցիչների վերաբերյալ տվյալներ

-

Քայլ 3. Դասընթացավարը ամփոփում է արդյունքները և ներկայացնում, որ Սա կարող է ներառել այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են՝

- Ներդրումներին կամ ծախսերին հետևելը (օրինակ՝ դեղամիջոցների առկայությունը, դպրոցական շենքերի շահագործումը)
- Ծառայությունների/նախագծերի որակի մոնիտորինգը (օրինակ՝ սպասելու ժամանակահատվածը, ուսուցիչների որակավորումը)
- Կատարողականի թիրախային ցուցանիշների նախանշում, որը կարող է օգտագործվել ռեսուրսների տեղաբաշխման և բյուջեի վերաբերյալ որոշումների կայացման ընթացքում:

Ներկայացնում է հարցերի օրինակներ, որոնք կարող են օգտագործվել ծառայություն մատուցողներից տվյալների հավաքագրման համար՝

- Ի՞նչ տեսակի ծառայություններ ենք մենք առաջարկում:
- Ինչպե՞ս ենք մենք դրանք առաջարկում:
- Որո՞նք են հիմնական մարտահրավերները:
- Ծառայության մատուցման մեջ ի՞նչ դեր ունի համայնքը և ունի՞ արդյոք մասնակցություն: Ինչո՞ւ:
- Ի՞նչ է հնարավոր անել իրավիճակը բարելավելու համար:

Քայլ .4 Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 3 խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է ՔԱՐՔ-ի անցկացման վերաբերյալ բաժանվող նյութը: Խմբերը ծանոթանում են բաժանվող նյութին, քննարկում և ավարտելուց հետո ներկայացնում մյուս մասնակիցներին: Վարժության համար տրվում է 10 րոպե ժամանակ:
Խմբերի ներկայացուցիչները տեսակետները ներկայացնելուց հետո պատասխանում են մասնակիցների հարցերին:

Նիստ 3
Սոցիալական հաշվետվողականություն

Խնդիրները՝	Այս նիստի վերջում մասնակիցները **կկարողանաան կազմակերպել՝** • Սոցիալական աուդիտ **կիմանան թե որոնք են՝** • Սոցիալական հաշվետվողականության սահմանումը • Սոցիալական հաշվետվողականության ֆորմալ բաղադրիչները • Սոցիալական հաշվետվողականությունը համատեքստին համապատասխանեցնելու մոդելը • Սոցիալական հաշվետվողականության գործիքների համապատասխանեցումը համատեքստին • Սոցիալական հաշվետվողականության ընտրված ծրագրեր • Հաջողված օրինակները
Ընդհանուր ժամանակը՝	1 ժամ 30 րոպե
Նիստի նկարագրություն՝	1. Սոցիալական աուդիտ (20 րոպե) 2. Սոցիալական հաշվետվողականության ներածություն (10 րոպե) 3. Սոցիալական հաշվետվողականության ֆորմալ բաղադրիչները (20 րոպե) 4. Սոցիալական հաշվետվողականությունը համատեքստին համապատասխանեցնելու մոդելը (20 րոպե) 5. Սոցիալական հաշվետվողականության գործիքների համապատասխանեցումը համատեքստին (10 րոպե) 6. Սոցիալական հաշվետվողականության ընտրված ծրագրեր (10 րոպե)
Նյութերը՝	✓ Ֆլիպչարտ, գունավոր մարկերներ,
Բաժանվող նյութերը՝	• Սոցիալական հաշվետվողականության հաջողված օրինակների բաժանվող նյութեր
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Տեսական նյութի ներկայացում • Ամփոփում

1. Սոցիալական աուդիտ (20 րոպե)

Ընդհանուր քննարկում, մտքերի գրոհ, խմբային աշխատանք (20 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ սոցիալական աուդիտը մի գործընթաց է, որի միջոցով հանրային ծրագրի բոլոր մանրամասները վերլուծվում են հանրային հանդիպման ընթացքում: Հանրային ծրագիրը կարելի է սահմանվել որպես հանրային ֆինանսներն օգտագործող նախագիծ: Այն ներառում է կառավարության կողմից նախարարությունների միջոցով առողջապահության, ճանապարհաշինության, կրթության և այլնի վրա ծախսվող գումարները՝ ներառյալ նաև ապակենտրոնացված ֆինանսները: Թեև սոցիալական աուդիտը երբեմն օգտագործվել է գնահատելու այնպիսի ծառայությունների որակը, ինչպիսիք են ոստիկանությունը, մաքսային ծառայությունները կամ դպրոցները, սակայն սոցիալական աուդիտների մեծ մասը թիրախավորում է հանրային աշխատանքները:

Քայլ 2. Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ սոցիալական աուդիտի նպատակի վերաբերյալ:

Ենթադրվող պատասխաններ՝

- Ապահովելու հանրային ծրագրերի իրականացման թափանցիկությունը
- Բացահայտելու հանրային ծրագրերի իրականացման անհամապատասխանությունները
-

Քայլ 3. Դասընթացավարը ամփոփում է արդյունքները և ներկայացնում, որ Վերոնշված նպատակներից բացի, սոցիալական աուդիտները հակված են ստանալու հետևյալ արդյունքները՝

- Հավաքագրելու ապացույցների վրա հիմնված, ճշգրիտ և անկողմնակալ ընկալվող տեղեկատվություն
- Ձևավորելու իրազեկվածություն շահառուների և տեղական ծառայություններ մատուցողների շրջանում
- Բարելավելու կառավարման մարմինների փաստաթղթերի և տեղեկատվության մատչելիությունը քաղաքացիների համար
- Հզորացնելու կառավարման մարմինների վարքագծի վրա քաղաքացիների ներգործելու կարողությունները:

Ընտրված ծրագրի պատշաճ իրականացումն ապահովելու համար սոցիալական աուդիտը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք որոշակի ծրագրերի համար հատկացված գումարները փաստացիորեն տեղ են հասել:
- Որո՞նք են ծրագրի ցուցանիշները: Արդյո՞ք դրանք իրականացվել են:

- Արդյո՞ք օգտագործվել են սահմանված քանակի և որակի միջոցներ:
- Արդյո՞ք բոլոր աշխատողները ստացել են իրենց նախատեսված աշխատավարձերը:
- Արդյո՞ք ծրագիրն ավարտվել է սահմանված ժամկետում:
- Ո՞վքեր են ծրագրի կառավարիչները:
- Արդյո՞ք ծրագրի համար հատկացված դրամական միջոցներն օգտագործվել են այն նպատակներով, ինչի համար դրանք հատկացվել էին:
- Արդյո՞ք համայնքը բավարար չափով ներառված է եղել ծրագրում:
- Արդյո՞ք ծրագրի կառավարիչները պահպանել են փաստաթղթավորումը պատշաճ կերպով:
- Արդյո՞ք ծրագրի կառավարիչները հանրությանը տվել են անհրաժեշտ տեղեկատվություն՝ հանրային մոնիտորինգին օգնելու համար:

Արդյո՞ք ծրագրի ընթացքում տեղ են գտել ֆինանսական միջոցների չարաշահումներ:

<u>Քայլ .4</u> Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 3 խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է Սոցիալական աուդիտի իրականացման, տեղեկատվության հավաքագրման համար խորհուրդների, տեղեկությունների վերլուծություն/համադրման և տեղեկատվության տարածման ու հետադարձ կապի ստացման վերաբերյալ բաժանվող նյութին, քննարկում և ավարտելուց հետո ներկայացնում մյուս մասնակիցներին: Վարժության համար տրվում է 10 րոպե ժամանակ:

Խմբերի ներկայացուցիչները տեսակետները ներկայացնելուց հետո պատասխանում են մասնակիցների հարցերին:

2. Սոցիալական հաշվետվողականության ներածություն (10 րոպե)

Ընդհանուր քննարկում , մտքերի գրոհ (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ Ե՛վ գիտնականները, և՛ պրակտիկ մասնագետներն ներկայումս եկել են նույն եզրահանգման. կոռուպցիան չի կարող արդյունավետ վերահսկվել առանց քաղաքացիական հասարակության ընդգրկվածության: Կոռուպցիայի հարցերով զբաղվող ականավոր գիտնականներից մեկը նշում է. «Կոռուպցիան կշարունակվի, ավելին՝ այն կհամարվի նորմա, քանի դեռ դրա վերացմամբ հետաքրքրված անձինք ունակ չեն լինի ընդդիմանալու այնպիսի միջոցներով, որոնք պարզապես հնարավոր չի լինի անտեսել» (Johnston 2014, 1):

Այս հայտարարության գործնական հետևությունն այն է, որ եթե

քաղաքացիական հասարակությունը հզոր է, ապա սոցիալական հաշվետվողականության նախաձեռնությունները կարող են որոշիչ դեր խաղալ կոռուպցիայի դեմ պայքարում:
Այս համատեքստում սոցիալական հաշվետվողականությունը վերաբերում է գործողությունների և մեխանիզմների լայն շրջանակին, որում քաղաքացիները կարող են ներգրավվել՝ (հանրային պաշտոնյաների և ծառայություն մատուցողների միջոցով ներկայացված) պետությանը հաշվետու պահելու համար, ինչպես նաև կառավարության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և այլ հասարակական դերակատարների այն գործողություններին, որոնք խրախուսում կամ դյուրացնում են այս ջանքերը (The World Bank, 2006, 5):

<u>Քայլ 2.</u> Դասընթացավարը կազմակերպում է մտքերի գրոհ սոցիալական հաշվետվողականության մարտահրավերների վերաբերյալ:
<u>Ենթադրվող պատասխաններ՝</u>

- Գործընթացը չպատկերացնելը
- Գործընթացը չկարևորելը և հաջողության նկատմամբ վստահության բացակայությունը
-

<u>Քայլ 3.</u> Դասընթացավարը ամփոփում է մտքերի գրոհ և ներկայացնում սոցիալական հաշվետվողականության հետև 2 կարևոր մարտահրավերները՝

- փոփոխությունների տեսություն մասին հստակ պատկերացում չունենալը
- տեղական բնութագրիչներին ու կարիքներին ոչ պատշաճ համապատասխանեցումը

Այնուհետև ներկայացնում է այդ արտահրավերները հաղթահարելուն միտված գործողությունները

3. Սոցիալական հաշվետվողականության ֆորմալ բաղադրիչները (20 րոպե)

Ընդհանուր քննարկում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ Սոցիալական հաշվետվողականության գաղափարի հիմքը քաղաքացիների և հանրային ծառայություններ մատուցողների միջև հարաբերություններն են: Վերջնանպատակն այս հարաբերություններն այնպիսի մակարդակի հասցնելն է, որում իրացվում են սահմանված իրավունքները, բարելավվում է

ծառայության մատուցման որակը, և, ի վերջո, աճում է քաղաքացիների բարեկեցությունը՝ վերջիններիս կազմակերպված և գիտակից մասնակցության միջոցով: Այս նպատակին հասնելու համար սոցիալական հաշվետվողականությունն առաջարկում է այնպիսի միջավայրի ստեղծում, որում քաղաքացիները կարող են լսելի դարձնել իրենց ձայնը, իսկ ծառայություն մատուցողները՝ պատասխանատու լինել նրանց առջև:

Գծապատկերում ներկայացնում է այս գնահատման հիմքում ընկած հայեցակարգային շրջանակը՝ բաղկացած տարբեր բաղադրիչներից և քայլերից, որոնք անհրաժեշտ են սոցիալական հաշվետվողականությունը խթանելու համար՝



Աղբյուր՝ «Baez Camargo and Jacobs, 2013»

Ներկայացված սխեման հիմնված է այն դրույթի վրա, որ սոցիալական հաշվետվողականությունը ներառում է երեք հիմնական տարր՝ (1) **ձայն, (2) գործադրելիություն և (3) պատասխան տալու պարտավորություն**, որոնք միասին մաս են կազմում մեկ ցիկլի: Այնուհետև բացատրում է յուրաքանչյուր տարրի իմաստը և նպատակը:

4. Սոցիալական հաշվետվողականությունը համատեքստին համապատասխանեցնելու մոդելը (20 րոպե)

Ընդհանուր քննարկում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, որ Սոցիալական հաշվետվողականությունը միտված է հանդես գալու որպես խթանիչ գործոն իրավազոր քաղաքացիների և պատասխանատու հանրային պաշտոնյաների միջև կառուցողական ու կայուն կապերի զարգացման համար: Հաճախ, այնուամենայնիվ, իրականությունը տարբեր է, և դրանում առկա են արմատավորված

սոցիալական անհավասարություն, իշխանության համար պայքար և հիմնական շահագրգիռ կողմերի միջև անվստահություն: Սոցիալական հաշվետվողականության նախաձեռնություններ իրականացնողները հաճախ բախվում են այնպիսի նախնական իրավիճակների, երբ, օրինակ՝ քաղաքացիներն իրավազուրկ են և կասկածում են փոփոխություն բերելու հնարավորությանը կամ նախընտրում են՝ որքան հնարավոր է հեռու մնալ հանրային ոլորտից, քանի որ չեն վստահում կառավարությանը և պետական պաշտոնյաներին:

Առաջարկի տեսանկյունից, ծառայություն մատուցողները և պետական պաշտոնյաները հնարավոր է՝ չունենան պատշաճ խթաններ՝ սահմանելու քաղաքացիների բավարարվածությունը որպես առաջնահերթություն: Սա կարող է հանգեցնել իրավիճակների, երբ ծառայություն մատուցողները իրենց հաշվետու են զգում միայն վարչարարական ապարատի կամ կառավարման մարմինների վերադասների առջև, և փոխհամաձայնեցված հանցավոր գործողությունները կարող են նպաստել այնպիսի միջավայրի ձևավորմանը, որում անպատժելիությունը համարվում է նորմ: Ուստի, մարտահրավերն այն է, որպեսզի մշակվեն սոցիալական հաշվետվողականության իրազեկ և համապատասխան նախաձեռնություններ, որոնք կարող են ճշգրտորեն գնահատել ու քննարկել և՛ պահանջարկի, և՛ առաջարկի կողմերում գերակայող պայմանները, և դրա հիման վրա մշակել մեխանիզմներ ու ռազմավարություններ՝ ծառայություն մատուցողների համար ճիշտ խթաններ սահմանելու նպատակով: Այսպիսով, սույն գնահատումը տրամադրում է ցուցանիշներ այն տարրերի համար, որոնք պետք է հաշվի առնել՝ հնարավոր դարձնելու դրական փոփոխությունն այնպիսի եղանակով, որը համահունչ է յուրաքանչյուր իրավիճակի՝ գոյություն ունեցող իրական պայմաններին:

Գծապատկերում ներկայացվում է Քաղաքացի – ծառայություն մատուցողների փոխհարաբերությունների որոշիչները՝



Սոցիալական հաշվետվողականության նախաձեռնությունները համատեքստին համապատասխանեցնելու մոտեցման հիմքում ընկած է այն ենթադրությունը, որ քաղաքացիների և ծառայություն մատուցողների միջև հարաբերությունը մեծապես որոշվում է մի կողմից, հասարակության սոցիալական կապիտալով և, մյուս կողմից, ծառայություն մատուցողների մոտիվացիաներով: Որտեղ ծառայություն մատուցողների և քաղաքացիների միջև կապը խաթարված է, այնտեղ սոցիալական կապիտալը ցածր է, և ծառայություն մատուցողներին չի սպառնում պատժվելու վտանգն իրենց կատարած վատ աշխատանքի դիմաց, և հավանական է, որ պահպանվեն կոռուպցիոն վարքագիծը և հակաօրինական գործողությունները: Նման իրավիճակներում ոչ պաշտոնական կապերն ու ծանոթությունները ձեռք են բերում կարևորություն, ծառայություն մատուցողները հնարավոր է՝ որ կաշառք պահանջեն գործընթացներն արագացնելու նպատակով, կամ քաղաքացիները, միգուցե, փորձեն օգնություն գտնել ի դեմս ոմն ազդեցիկ մեկի, որպեսզի ձեռք բերեն այդ ծառայությունը:

5. Սոցիալական հաշվետվողականության գործիքների համապատասխանեցումը համատեքստին (20 րոպե)

Ընդհանուր քննարկում (20 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է, թե ինչպես է հնարավոր կապակցել թիրախ համայնքների բնութագրիչները սոցիալական հաշվետվողականության կոնկրետ համատեքստին համապատասխանող գործիքին: Ելնելով նրանից, որ գոյություն չունի սոցիալական հաշվետվողականության բոլոր պայմաններին համապատասխանող ունիվերսալ գործիք, այս բաժնում ներկայացված փաստարկները նպատակ ունեն ցույց տալու, թե ինչպես տեղական համատեքստի բնութագրիչների իմացությունը կարող է կիրառվել՝ սոցիալական հաշվետվողականության մոտեցումը հնարավորինս հարմարեցնելու համար:

Սոցիալական հաշվետվողականության մոտեցումների տեսակները՝ տարբերակված ըստ ծրագրի բաղադրիչների

1. Կարողությունների կառուցում

Մոտեցման տեսակը	Ուղղակի/անձնավորված	Անուղղակի/ոչ անձնավորված
Ընդհանուր նկարագրություն	Տեղեկատվություն մանդատի, իրավունքների, իրավասությունների և սոցիալական հաշվետվողականության	Տեղեկատվություն մանդատի, իրավունքների, իրավասությունների և սոցիալական
	մոտեցման մասին, որը ներկայացվում է քաղաքացիներին, որպես կանոն, հարաբերականորեն փոքր խմբերում և ինտենսիվ կերպով (դասընթացներ, աշխատաժողովներ):	հաշվետվողականության մոտեցման մասին, որը տարածվում է հանրայնորեն հասանելի եղանակով (տպագրություն, համացանց, մամուլ, սոցիալական մեդիա):

Մոտեցման արդյունավետության հետ կապված համատեքստային տարրեր	• Համայնքային միջավայր
	• Հորիզոնական ցանցերի առկայություն
	• Փոքրաթիվ համայնքների թիրախավորում
	  ○ Գյուղական համայնքներ
	  ○ Քաղաքային թաղամասեր, որտեղ տեղական մասնակցության մակարդակը բարձր է
		• Միջավայրեր, որտեղ գերակայում են սոցիալական փոխազդեցության անհատական մոդելները
		• Թույլ քաղաքացիական հասարակություն և հորիզոնական ցանցերի բացակայություն
		• Ավելի մեծ բնակչություն ունեցող համայնքների թիրախավորում
		  ○ Մեծ շրջաններ
		  ○ Քաղաքային միջավայրեր, որտեղ տեղական մասնակցության մակարդակը ցածր է

Ուժեղ կողմեր	• Տալիս է մանրակրկիտ գիտելիք և ուստի կարող է զարգացնել ստացողների կարողությունը՝ ընդգրկվելու ավելի բարդ և հնարավորինս ավելի հեռու գնացող հակակոռուպցիոն գործողություններում: • Քաղաքացիների հզորացումը հասնում է առավելագույնի:	• Կարող է հասանելի դառնալ բավականին մեծ թվով քաղաքացիների • Մատչելիությունը հարմար է, քաղաքացիներից չի պահանջում զգալի ժամանակ և էներգիա:
Մարտահրավերներ	• Կարող է հասանելի լինել միայն սահմանափակ թվով քաղաքացիների: Սակայն կարող է առաջացնել դրական կողմնակի ազդեցություն համայնքում, եթե կիրառվի խիտ հորիզոնական ցանցեր ունեցող միջավայրում: • Պահանջում է էական ժամանակ և էներգիա մասնակից քաղաքացիներից:	• Փոխանցվող տեղեկատվության ծավալը սահմանափակ է: • Հզորացման հնարավորությունները սահմանափակված են փոխանցվող տեղեկատվության ծավալով:
Օրինակներ	Դասընթացներ՝ կապված հետևյալի հետ. • Մասնակցային բյուջետավորում • Համայնքային գնահատման քարտեր • Քաղաքացիների կողմից մոնիտորինգային գործողություններ	• Քաղաքացիների պարտավորագրեր • Թափանցիկության պորտալներ • Կրթական քարոզարշավներ

2 Քաղաքացիների մասնակցության ձևեր

Մոտեցման տեսակը	Կոլեկտիվ ներդրում	Անհատական ներդրում
Ընդհանուր նկարագրություն	Սոցիալական հաշվետվողականության ծրագիրը պահանջում է քաղաքացիների կոլեկտիվ և համակարգված մոբիլիզացում (խմբային գործողություններ): Հնարավորություն է տալիս քաղաքացիներին պատասխանատու լինել ձայների համախմբման և բարձրաձայնման համար:	Քաղաքացիները մասնակցում են սոցիալական հաշվետվողականության ծրագրերին անհատական մակարդակով ներդրում ունենալու միջոցով: Երրորդ կողմից (որպես կանոն՝ ՀԿ-ներ ու ՔՀԿ-ներ) պահանջվում է համախմբել և բարձրաձայնել քաղաքացիների կարծիքները:
Մոտեցման արդյունավետության հետ կապված համատեքստային տարրեր	Ավելի հարմար է փոքր համայնքների համար (գյուղերում կամ քաղաքային ուժեղ թաղամասերում) Կոլեկտիվ գործողության համար պահանջվող կարևոր կարողություններն են՝ • Տեղական մասնակցության բարձր մակարդակը • Համայնական մոտեցումն օգնում է, բայց անպայման չի եթե առկա են ամուր հորիզոնական ցանցեր:	Ավելի հարմար մեծ համայնքների համար (քաղաքային մեծ ագլոմերացիաներում) Հարմար է այնպիսի համատեքստում, որտեղ կոլեկտիվ գործողություններ իրականացնելու կարողությունը թույլ է. • Ցածր մասնակցություն կամավորական միավորումներում • Անհատական մոտեցում խնդիրների լուծման հարցում
Ուժեղ կողմեր	• Ավելացնում է հավաքվող տեղեկատվության մանրամասները և ընդլայնում դրա շրջանակը: • Հանդիսանում է լավագույնը քաղաքացիների հզորացման տեսանկյունից, քանի որ համատեղ գործող անհատները մեծացնում են սոցիալական կապիտալը:	• Պաշտպանում է գաղտնիությունը, երբ առկա են պատասխանատվության ենթարկվելու վախեր: • Պահանջում է սահմանափակ ժամանակ և հարմարավետ է:
Մարտահրավերներ	• Պահանջում է նշանակալից ժամանակ և էներգիա:	• Տեղեկատվությունը սահմանափակ է, և, ըստ այդմ, հնարավոր է, որ որակը լինի անբավարար:

Օրինակներ	• Քաղաքացիների մոնիտորինգային գործողություններ
	• Համայնքային գնահատման քարտեր
	• Մասնակցային բյուջետավորում
		• Բողոքների և անօրինականությունների ազդարարման մեխանիզմներ.
		  ○ SMS-ների միջոցով ազդարարում
		  ○ Առցանց ազդարարում
		  ○ Բողոքների կառավարման պաշտոնական համակարգեր
		• Քաղաքացիների արձագանքման քարտեր

3 Ձայնի փոխանցումը պետական դերակատարներին

Մոտեցման տեսակը	Ուղղակի	Անուղղակի
Ընդհանուր նկարագրություն	Մասնակցային գործողություններից բխող արդյունքներն ուղղակիորեն փոխանցվում են պետական դերակատարներին, որոնցից առավել առնչվողները նրանք են, որոնք ունեն որոշումներ կայացնելու իրավասություն՝ ստացված տեղեկատվության համապատասխան գործելու համար:	Մասնակցային գործողություններից ստացված արդյունքները տարածվում են հանրային հաղորդակցության խողովակների միջոցով:
Մոտեցման արդյունավետության հետ կապված համատեքստային տարրեր	Քաղաքացիները վստահում են կառավարման մարմինների պաշտոնյաներին և/կամ ծառայություն մատուցողներին: Առկա է քաղաքական կամք հանրային հատվածի պաշտոնյաների շրջանում, որոնք պատշաճ արձագանքում են քաղաքացիներին	Այլ դերակատարները (լրատվամիջոցներ, ՀԿ-ներ), որոնք վստահություն են վայելում համայնքում, համապատասխան դերակատարում ունեն այն դեպքերում, երբ թույլ է վստահությունը պետական դերակատարների հանդեպ: Հարմար է, երբ պետական ինստիտուտների կապերը թույլ են և/կամ երբ առկա է սահմանափակ արձագանք համապատասխան պետական պաշտոնյաների կողմից:
Ուժեղ կողմեր	Ամենաարդյունավետ միջոցն է՝ ստեղծելու աշխատանքային հարաբերություններ քաղաքացիների և պետական դերակատարների միջև, և ստեղծելու անհրաժեշտ պայմաններ ուղղակի հաշվետվողականության կիրառման համար:	Հանրային հաշվետվողականության մեխանիզմների միջոցով վերհանված հարցերի ավելի մեծ տեսանելիությունը և հանրային իրազեկությունը դրանց վերաբերյալ կարող են բարձրացնել դրանց չարձագանքելու գինը հիմնական որոշում կայացնողների համար:
Մարտահրավերներ	Հնարավոր է՝ պահանջվի ռազմավարական որոշումների կայացում, թե որ պետական դերակատարները ներգրավվեն, որոնք կունենան գործառույթ ըստ ստացված տեղեկատվության և արձագանքման:	Ոչ հստակ ազդեցություն պետական դերակատարների մոտիվացիաների վրա
Օրինակներ	• Համայնքային գնահատման քարտ • Մասնակցային բյուջետավորում	• Քաղաքացիների գնահատման քարտ • Լրատվամիջոցներով լուսաբանում, մամլո հաղորդագրություններ, ՀԿ/ՔՀԿ կայքեր, համայնքային հանդիպումներ

4 Կիրարկման մեխանիզմներ

Մոտեցման տեսակ	Պաշտոնական	Ոչ պաշտոնական
Ընդհանուր նկարագրություն	Ծառայություն մատուցողների հիմնական մոտիվացիաներն ուղղակիորեն փոխկապակցված են քաղաքացիների գնահատումների հետ՝ ինստիտուցիոնալացված և պաշտոնապես ճանաչված մեխանիզմների միջոցով:	Ծառայություն մատուցողների մոտիվացիաները փոխկապակցված են քաղաքացիների գնահատումների հետ ոչ պաշտոնական միջոցներով (սոցիալական կարգավիճակ, հեղինակություն):
Մոտեցման արդյունավետության հետ կապված համատեքստուալ տարրեր	Հանրային ծառայության ավելի բարձր մակարդակներում հաճախ պահանջվում է վճռական քաղաքական կամք, որպեսզի առաջ մղվեն իրավական և պաշտոնական ինստիտուցիոնալ բարեփոխումները:	Տեղական կառավարման մարմինների պաշտոնյաների և հանրային ծառայություն մատուցողների ներգրավվածություն: Ծառայություն մատուցողների և/կամ տեղական կառավարման մարմինների պաշտոնյաների շրջանում համագործակցային տրամադրություններ:
Ուժեղ կողմեր	Տալիս է ամուր ինստիտուցիոնալ հենք կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների մշակման և համախմբման համար:	Ստեղծում է ուժեղ կապեր համայնքների և նրանց ծառայություն մատուցողների միջև:
Մարտահրավերներ	Հնարավոր է ներառի իրավական և կարգավորիչ դաշտերի քաղաքականապես դժվարին բարեփոխումներ:	Դժվար է չափել: Արդյունավետությունն, առնվազն կարճաժամկետից մինչև միջնաժամկետ ինտերվալում հնարավոր է կախված լինի սոցիալական հաշվետվողականության սխեմայի կայունությունից:
Օրինակներ	• «Վճարում կատարողականի համար» (P4P) սխեմաներ, կատարողականի հիման վրա տրվող պարգևավճարներ • Հստակ և հետևողականորեն կիրառվող սանկցիաներ կոռուպցիոն գործողություններում ընդգրկվելու համար:	• Քաղաքացիների արձագանքման քարտեր

5 Հաշվետվողականության և արձագանքման մեխանիզմներ

Մոտեցման տեսակը	Ուղղակի	Անուղղակի
Ընդհանուր նկարագրություն	Քաղաքացիներն ուղղակիորեն տեղեկացված են, թե ինչպես է օգտագործվելու սոցիալական հաշվետվողականության սխեմայի միջոցով ստացված տեղեկատվությունը:	Սոցիալական հաշվետվողականության սխեմայով ստացվող տվյալների և ակնկալվող արդյունքների մասին տեղեկությունն ու թարմացումներն օգտագործվում են հանրային պաշտոնյաների կողմից և տարածվում են հանրամատչելի միջոցներով:
Մոտեցման արդյունավետության հետ կապված համատեքստային տարրեր	Փոքր համայնքներ	Մեծ բնակչություն ունեցող բնակավայրեր, քաղաքային միջավայր
Ուժեղ կողմեր	Կա մեծ պոտենցիալ լիազորման և հզորացման և կայունության համար, քանի որ սոցիալական հաշվետվողականության մասնակիցները կարող են ուղղակիորեն դիտարկել և գնահատել իրենց գործողությունների ազդեցությունները և կոլեկտիվ գործողության օգուտները:	Մեծացնում է տեսանելիությունը, և երբ ներկայացվում են հաջողված սոցիալական հաշվետվողականության նախաձեռնությունների արդյունքները, դրանք կարող են մոտիվացնել նաև այլ համայնքներին կամ կիրառվել այլ ոլորտներում:
Մարտահրավերներ	Պահանջվում է ավելի շատ ժամանակի ու միջոցների տրամադրում և պահանջարկի, և առաջարկի տեսանկյունից՝ համակարգելու հանդիպումները և պահպանվի սխեման:	Տեղեկատվության մատչելիությունը հնարավոր է լինի սահմանափակ նախատեսված շահառուների և, հատկապես՝ ցածր եկամուտ ունեցող խմբերի շրջանում (ինտերնետի հասանելիության բացակայություն, անգրագիտություն): Ավելի թույլ է կապված կայունության հետ:
Օրինակներ	• Հանրային լսումներ • Հանրային ոչ ֆորմալ քննարկումներ (town hall meetings)	• Համացանցային հետադարձ կապի մեխանիզմ • Լրատվամիջոցներ

6. Սոցիալական հաշվետվողականության ընտրված ծրագրեր (20 բոպե)

Ընդհանուր քննարկում (20 բոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը ընդհանուր քննարկման միջոցով ներկայացնում է մասնակցային բյուջետավորումը, որպես ընտրված ծրագիր: Մասնակցային բյուջետավորումը (ՄԲ) հիմնականում սահմանվում է որպես այնպիսի մեխանիզմ կամ գործընթաց, որի միջոցով քաղաքացիներն ուղղակիորեն մասնակցում են բյուջեի ձևավորման, որոշումների կայացման և բյուջեի կատարման մոնիտորինգի տարբեր փուլերին: ՄԲ-ն կարող է լինել գործիք՝ բարձրացնելու հանրային ծախսերի թափանցիկությունը և բարելավելու բյուջեի

թիրախավորումը: Քանի որ այն օգտակար միջոց է՝ խթանելու քաղաքացիական ընդգրկվածությունն ու սոցիալական ուսուցումը, ՄԲ-ն անվանվել է արդյունավետ «քաղաքացիության դպրոց»:

Մեծամասամբ, ՄԲ գործընթացը կազմակերպվում է տարեկան կամ բազմամյա հանրային բյուջետավորման շուրջ՝ ստորև նշված եղանակով:

Մասնակցային գործընթացի փուլը սովորաբար սկսվում է մարզային հանդիպումներով՝ վարչատարածքային միավորների փոքր ստորաբաժանումներում կազմակերպվող հանրային լսումներով, որոնց նպատակն է ՄԲ գործընթացն ավելի մոտեցնել քաղաքացիներին: Կառավարության ներկայացուցիչներն օգտագործում են այս հանդիպումները քաղաքացիներին ՄԲ կանոնների և գործընթացների մասին տեղեկացնելու համար, թարմացնում են ընթացիկ բյուջեի կատարողականի մասին տեղեկատվությունը և կիսվում են քաղաքացիների հետ կառավարության առաջնահերթությունների և եկամուտների կանխատեսումների մասին ինֆորմացիայով: Հանդիպումների երկրորդ փուլը կազմակերպվում է, որպեսզի հնարավորություն ընձեռվի քաղաքացիներին բացահայտելու իրենց առաջնահերթությունները և ընտրելու պատվիրակներ, ովքեր կներկայացնեն իրենց մտահոգությունները Մասնակցային բյուջետավորման խորհրդում: Համայնքային կազմակերպությունները քաղաքացիներին հանդիպում են առանձին, որպեսզի տեղեկացնեն նրանց ՄԲ առաջնահերթությունների մասին, բարձրացնեն իրազեկությունը և ակտիվացնեն նրանց մասնակցությունը հատուկ առաջնահերթությունների շուրջ:

Նիստ 4
Սոցիալական հաշվետվողականություն

Խնդիրները՝	Այս նիստի վերջում մասնակիցները **կիմանան թե որոնք են՝** • Հաջողված օրինակները **Կկարողանան՝** • Իենց կողմից ներկայումս իրականացվող ծրագրերի հետագա անելիքները հստակեցնել • Խրախուսել ջատագովությունը
Ընդհանուր ժամանակը՝	1 ժամ 30 րոպե
Նիստի նկարագրություն՝	1. Հաջողված օրինակների ուսումնասիրություն (30 րոպե) 2. Իրականացվող 5 ծրագրերի քննարկում (40 րոպե) 3. Ջատագովության խրախուսում (10 րոպե) 4. Դասընթացի ամփոփում (5 րոպե) 5. Մասնակիցների կողմից դասընթացի գնահատում (5 րոպե)
Նյութերը՝	✓ Փլիպչարտ, գունավոր մարկերներ,
Բաժանվող նյութերը՝	• Սոցիալական հաշվետվողականության հաջողված օրինակների բաժանվող նյութեր
Մեթոդները՝	• Մտքերի գրոհ • Բաց և փակ հարցեր • Ընդհանուր քննարկումներ • Խմբային աշխատանք • Ամփոփում

1. Հաջողված օրինակների ուսումնասիրություն (30 րոպե)

Խմբային աշխատանք (30 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը մասնակիցներին բաժանում է 4 խմբի և յուրաքանչյուր խմբին տալիս է Սոցիալական հաշվետվողականության վերաբերյալ 2 արտասահմանյան երկրների՝ Ֆիլիպինների, Սերբիայի, և երկու տեղական Ստեփանավանի տարածաշրջանի հաջողված օրինակների բաժանվող նյութ: Խմբերը ծանոթանում են նյութին, քննարկում և ավարտելուց հետո ներկայացնում մյուս մասնակիցներին: Վարժության համար տրվում է 10 րոպե ժամանակ:
Խմբերի ներկայացուցիչները տեսակետները ներկայացնելուց հետո պատասխանում են մասնակիցների հարցերին:

2. Իրականացվող 5 ծրագրերի քննարկում (40 րոպե)

Ընդհանուր քննարկում (40 րոպե)

<u>Քայլ 1.</u> Քանի որ դասընթացի մասնակիցները արդեն իսկ իրականացնում են մասնակցային մոնիտորինգի 5 ծրագրեր, առաջարկվում է նրանց ներկայացնել իրենց կողմից իրականացվող ծրագրերը, նշելով ձեռքբերումներն ու խոչընդոտները: Ներկայացնողները պատասխանում են մասնակիցներին հարցերին: Ընդհանուր քննարկվում է առաջացած խոչընդոտների հաղթահարման ձևերը, որից հետո դասընթացավարը ամփոփում է և տրամադրում անհրաժեշտ խորհրդատվություն հետագա ընթացքի վերաբերյալ:

3. Ջատագովության խրախուսում (10 րոպե)

Ընդհանուր քննարկում (10 րոպե)

<u>Քայլ 1.</u> Դասընթացավարը կազմակերպում է ընդհանուր քննարկում ջատագովության վերաբերյալ, այնուհետև ներկայացնում է Ստեփանավանի տարածաշրջանի 5 համայնքներում ջատագովությանը խանգարող հանգամանքների վերաբերյալ իրականացված սոցիալական հարցման արդյունքները ու դրանց հաղթահարման համար իրականացված գործողությունները:

4. Դասընթացի ամփոփում (5 րոպե)

Մտքերի գրոհ (5 րոպե)

Քայլ 1. Դասընթացավարը մասնակիցների հետ անց է կացնում մտքերի գրոհ այդ օրվա թեմաների վերաբերյալ: Այնուհետև պատին փակցված ակնկալիքների վրայով մեկ առ մեկ անցնելով ճշտում է, թե մասնակիցների ակնկալիքները ինչքանով բավարարվեցին:

5. Մասնակիցների կողմից դասընթացի գնահատում (5 րոպե)

Մասնակիցները կատարում են դասընթացի գնահատում Գնահատման թերթիկների միջոցով: